

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍՍԿՑՈՒԹԵԱՆ

ՊԻՏԻ ԶԱՐԴԵՆ

Հայաստանի մեծ Արինահեղութենէն ի վեր, արտասահմանի Հայութեան մէջ երևան եկաւ՝ Մարդկութիւնը մտտող ու ջարդուելու միայն արժանի բազմութիւն մը, որ ստրկօրէն, անասնօրէն Յեղափոխութեան ոգին ժողովուրդին մէջ սպաննելու կը հետամտի թաքուն ու ալլազան ձեւերու տակ:

Ելլալի գազանը անգաղղում ու արինոտ հերքումներ կուտայ անոնց, որոնք զեռ կը յամառին պնդելու որ Հայը՝ սուլթաններու հովանիին տակ միայն կրնայ իր գոյութիւնը պահպանել:

Մուշի վերջին դէպքերը, որոնց մանրամասնութիւնները հրատարակեց եւրոպական ժամուրը՝ Ելլալի Որչէն պրուած նորագոյն ապացոյցներն են՝ սուլթանին հայ կեանքերը պահպանելու մասնաւոր եղանակին:

Հակառակ այս ջախջախիչ իրողութիւններուն, Հայոց պատրիարքը վայրկեան մը չգաղղի սուլթանի կառավարութեան հայադորով զգացումները ջատագովելէ ու արտասահմանի մեղի, ետական ու անբարոյացած վճռակը Յեղափոխութեան դէմ հաշիւէ:

Ժողովուրդ մը որ չգիտեր ատել իր կեղեքիչները, որ զինքը խողովողը զահիծները կ'օրհնէ ու իր եղբայրներուն արեան ու զիակներուն մէջէն երկնցող եղծնական ձեռքը համբուրելու կարող կ'ըլլայ, այդ ժողովուրդը վատերու, սարուկներու պոռնկացած գանգրւած մըն է:

Մեր Հայրենիքը զարնող աղէտներէն վերջը, ա'լ ցտնուելու չէր Հայ մը, որ Յեղափոխութեան դէմ բերան բանալու պիղծ համարձակութիւնը ունենար: Եւ եթէ Հայութիւնը եղած ըլլար ան, ինչ որ պէտք էր ըլլար՝ խայտառակութեան ու խաղբութեան ցիցին բեւեռուած պիտի տեսնէինք այսօր բոլոր այն ի ծնէ վատ ու սարկութեամբ թրծուած ու մասնութեան ուխտուած տղամուս հոգիները որոնք մղեցին ժողովուրդը ներողութիւն խնդրելու մարդասպաններէն, անոնց՝ Հայ արիւնին մէջ կարծրած մատները լզելու:

Իր իրաւունքներուն գիտակցութիւնը չունեցող ու ինքնապաշտպանութեան պէտքը չզգացող ու ատոր չպատրաստուող ամէն ազգ մահուան կը դատապարտէ ինքզինքը:

Հայ աշխարհը սպանգանոց մը ըլլալէ պիտի գաղղի այն օրը չիայն, երբ Հայ ժողովուրդը Յեղափոխութեան անպարտելի Գաղափարին պիտի փարի իր որտին ու հոգիին բովանդակ թափովը:

Յեղափոխութիւնը Հայութեան կուռքը, մեր ազգային կրօնքը գարձած պիտի ըլլար այսօր, եթէ մարդկային արժանապատուութեան զօրաւոր զգացումը ու Ազատութեան հրաշագործ տենջանքը արթնցած, տիրապետած ըլլային մեր մէջ:

Բայց Յեղափոխութիւնը՝ փոխանակ երկրպագուելու՝ նախատուեցաւ արտասահման մարդերու կողմէ որոնք անոր անունն անգամ բերանիս չտանել չէին համարձակիր երկրին մէջ:

Հայերու լէզոն մըն ալ ինչ որ ազգային գերագոյն մաքառումին հանդէպ իր լիարժեք անտարբերութիւնը արդարացնելու համար բազմաթիւ անհեթեթ ու անիմաստ պատրուակներ հնարեց որոնց գլխաւորներէն է «Միութեան խնդիրը»: Բայց մենք այս մարդոց ցամքած ու խանգավառութեան անկարող հոգիին մինչեւ յատակը ճանչցանք, երբ տակաւին միութեան պատրուակը հրապարակ նետուած չէր, երբ զեռ վախկոտները, սարկակամիտներն ու անձնապաշտները չէին մտաբերած զայն շահագործել, անոր ետին ամբանալ, ազատելու համար Կոիւին մասնակցած չըլլալու անողոք մեղադրանքէն: Պէտք է նկատիլ որ այս մարդիկը ազգին ու Յեղափոխութեան հանդէպ իրենց պարտականութիւնները չկատարեցին Միտքեան խնդրին ծագումէն շատ առաջ ու մենք՝ առանց վարանելու՝ կը յայտարարենք որ անոնք վաղն ալ, միութեան խնդրին լուծումէն յետոյ, տեղերնուն չպիտի շարժին ու նորանոր օտաւեր ու նորանոր պատրուակներ պիտի օտեղծեն իրենց յաւիտենական անտարբերութիւնը չքմեղելու համար:

Անոնք որոնք ներսիցին ճշմարիտ Հայրենասիրութեան կրակը կը վառի, անոնք չեն կրնար ինքզինքնին արգիլել՝ որ եւ է պատրուակով՝ Կոիւին մէջ նետուելէ, կամ կերպով մը անոր մասնակցելէ:

Ի՞նչ կայ աւելի հրէշաւոր, աւելի ինկած, աւելի քստմեն- լի, քան հայ հայրը, հայ ամուսինը, հայ եղբայրը, որոնք անշարժ հանդիսատես կ'ըլլան իրենց ընտանեկան պա- տուոյն բոնաբարումին ու թոյլ կուտան որ զայն պղծեն, իրենց աչքին առջեւ ու՝ այս մահէն աւելի մահացու նախատինքին հանդէպ՝ չեն ծառանար, չեն մաքառիր, չեն մեռնիր, պատրուակելով որ հայր, ամուսին կամ եղբայր իրարու մէջ միութիւն չունին, պատրուակելով որ զրացիները օգնութեան չեն հասնիր ու չեն միանար իրենց:

— Ահա մեր անսարբերները, անձնատէրները, մենձ ազանները, որոնք իրենց վատութեան որջերէն կը ծա- փահարեն Բոնաբարումի ու Անպատուութեան առջեւ չո- րեքթաթ համակերպումը ու մարդկութեան խղճմտանքը ըմբոստացնող տեօարաններու առջեւ քարացած հանդի- դիսատեսութիւնը: Ու այս ցածերն են որ կը նախատեն, կը վարկաբեկեն անոնք որ անձնուրացութեամբ, ու գրեթէ միշտ իրենց արեան գնով, օգնութեան կը նետուին, կը պաշտպանեն ազգային բոնաբարուած իրաւունքները ու կը փրկեն Հայուն Պատիւը:

«Աստուած թիրքին թօքուզը Հայուն գլխէն պա- կաս չընէ՛» ըսելով կամովին գլուխ ծող Սարկութեան զաւակները — որոնց պարագլուխներն են՝ մէկ կողմէն Օրմանեան՝ խաչը ձեռքը բռնած՝ միւս կողմէն, կարգ մը մենձ—ազաններ՝ իրենց զրամին կասկածելի հեղինա- կութեամբը գինուած՝ բացարձակ ոչխարային համակեր- պութիւն կը քարոզեն ժողովուրդին:

— Անոնք մեր աէրերն են, կ'ըսեն, թո՛ղ զարնեն, սպաննեն, թալլեն, անպատուեն ու պղծեն... իրաւունք ունին... մենք ո՛վ ենք... մենք ի՞նչ հատար ունինք անոնց դէմ դնելու... թո՛ղ երեք հարիւր հազար հոգի ջարդած ըլլան... Ի՞նչ կըլլայ... Ազգը չհատար ա՛... օր մը նորէն խալիֆաներու երկնատուր գթութիւնը առատաձեռն շնորհք- ներով կը լիացընէ մեզի...:

Աւելի բազմաթիւ են չէզոքները: Անոնք որ իրենց հայրենասիրական զգացումները գոհացուցած, իրենց ազգային պարտականութիւնները կատարած ըլլալ կը համարին՝ եկեղեցիի պնակին մէջ քանի մը բարա նետելով, Հիւանդանոցի տարեկան քանի մը ֆրանք տալով կամ որբանոցի մը ի նպաստ ատեն ատեն գումար մը հան, զանակելով: Ու ասոնք ինքզինքնին բուն ազգասէր ու հայրենասէր կարծողներն են: Ասոնք չկրցան դեռ մ- բընել թէ շարիք մը արմատախիլ ընելը չի նշանակեր անկից առաջ եկած հետեանքները զարմանել: Ասոնք պէտք է հասկնան վերջապէս թէ որբեր խնամելը որքան ազնիւ պարտականութիւն մըն է, այնքան և աւելի մեծ, այնքան և աւելի նուիրական պարտականութիւն մըն է ա- ջակցիլ, աշխատիլ ու գոհել այն նպատակին որ կը ձգարի ո՛չ միայն որբերու գոյութեան պատճառը վերցը- նել, այլ և ուրիշ շատ մը տառապանքներ ալ՝ որոնք

կը ճնշեն հայ ժողովուրդին վրայ եւ որոնք ուղղակի արդիւնքն են Հայրենիքին շղթայակապ ու գերի վի- ճակին:

Վերջին տարիներու միջոցին՝ Հայ ազգին թշուա- ութութիւնը ամոքելու համար եղած օտար ու հայ նպաստ- ները — որոնք իրական ամոքում մը չբերելէ զատ, ժողո- վուրդին մէջ մուրացկանութեան ու ստորնացումի հա- կումները անհունօրէն զարգացնելու նպատեցին — եթէ Յեղափոխութեան տրամադրուած ըլլային՝ ոչ միայն խը- նամելու որբեր չպիտի ունենայինք, այլ և Հայ Յեղափո- խութիւնը իր նպատակին հասած պիտի ըլլար այսօր:

Եթէ հայ ժողովուրդը շարունակէ չըմբռնել Յեղա- փոխութեան անհրաժեշտութիւնը, անոր փրկարար զօ- րութիւնը, թո՛ղ նորանոր աղէտներ դարմանելու ու նո- րանոր որբեր խնամելու, նորանոր թշուաութիւններու անվերջանալի տողանցութեանը պատրաստուի:

Երէկ, Հայ ժողովուրդը չհասկցաւ այս քարքական ճշմարտութիւնը ու ջարդուեցաւ:

Այսօր, կը յամառի չհասկնալ զայն ու կը ջարդուի: Վաղը, նոցէն պիտի ջարդուի, եթէ վերջապէս հառ- կցած չըլլայ Յեղափոխութեան հանդէպ ունեցած իր պար- տականութիւնները ու չփութայ անոնց կատարումին:

ԱՋԱՏ ԽՕՍԲԵՐ

ՇԻՏԱԿ ԺԱՄԲԱՆ

Եսական մեկուսացումի ու շատախօս անտարբերու- թեան վիթխարի զանգուածին քով՝ անոր խառնուած՝ կէս—խօսող, կէս—չէզոք, կէս—գործողներու ցանցառ ու անգոյն փոքրամասնութիւն մըն ալ կայ, որուն առջեւ կ'արժէ կանգ առնել վայրկեան մը:

Հայրենատէրներն են ասոնք:

— Ո՛վ ըսաւ որ միւսները հայրենատէր չեն, պիտի առարկէք, շատ իրաւունքով: Մենք ալ, ձեզի նէս, առ- ջի բերան, այդ բնական, ինքնածին ու անխուսափելի հարցումը ըրինք ինքնիրեննիւ: Բայց՝ այս կարգի փա- փուկ խնդիրներու մէջ անվիճելի հեղինակութիւն ու- նեցող անձեր՝ բացատրեցին մեզի թէ այդ «հայրենա- սէր» բառը պաշտօնական տիւղոս մըն է պարզամպէս, թէ զայն կրողները երբէ՛ք չեն յաւակնած մենաջնորհը ունենալ ազնուական զգացումին որ այդ բառով կը թարգ- մանուի, թէ մանաւանդ անհրաժեշտ համարած են այդ

տիտղոսը՝ առնել՝ ինքզինքնին առաջուց երաշխաւորելու համար ամէն վտանգաւոր ենթադրութեան զէմ ու իսպառ վանելու՝ յեղափոխական կարծուելու ամենափոքր անպատուիչ հաւանականութիւնն իսկ:

— Որովհետեւ, աւելցուցին վերոյիշեալ անվիճելի հեղինակութիւնները, հայրենասէր ու յեղափոխական իրարու բոլորովին հակառակ իմաստով բառեր են, պէտք չէ՝ մոռնալ ասիկա:

Այս համաբաւար Հայրենասէրները երկու մասի կը բաժնուին, — անոնք որ, առանց իրական զոհողութեան մը ու առանց անհատական գերազանց արժանիքի, կ'ուզեն հանրային ուշադրութիւնն ու համակրանքը վաշելու ու անոնք որ կարծօրէն առպարէզ բրած են իրենց այդ տիտղոսը, որ կը ներէ իրենց՝ Յեղափոխութեան բարեկամ երևալով ու այսպէս շահագործելով հանգրձ մոլորութիւն միամտութիւնը՝ չխրաչեցնել հարուստները, չվիրաւորել վաճառական հոգիները ու՝ ազատագրուած յեղափոխականի անհանդուրձելի արատէն՝ անոնց ալ մերձենալ, զանոնք ալ շահագործելու: Ո՞վ չէ լսած հասա-փոր ու հաստ-հոգի ունեւորներ որոնք յաղթական իմաստութեան մը արդարակորով շեշտով՝ մագիստրօսաբար կը յայտարարեն:

— Պարոն Միսաքը... Օ՛, ա՛ն քեամիլ մարդ է, շէնք շնորհք, պարկեշտ, խելքը զիւր մարդ է... ա՛ն մէկալ շափերններուն պէս չէ... ա՛ն յեղափոխական չէ՛ կֆէնտիմ... հայրենասէր է...

Ու պարոն Միսաքը կամ պարոն Մարտիրոսը այդ հայրենասէր բառին երեսէն ա՛լ տուն տեղ կը շինեն, զաւակներու տէր կ'ըլլան ու երջանիկ ծերութեան մը կը հասնին:

Այս վերջիններուն վրայ չենք ուզեր ծանրանալ: Ատիկա շատ բան պիտի ըսել տար ու շատ հեռուները պիտի տանէր մեզի:



Հայրենասէրները արտասահման հաստատուած, մեծ մասամբ բարեկեցեցիկ հայրերն են, որոնք Յեղափոխութեան սահմանէն դուրս՝ ազգային ճակատագրովը շահագրգռուելու, բաներ մը ընելու, գործի վրայ ըլլալու երևոյթն ունին:

Ասոնք Յեղափոխութեան բացարձակապէս հակառակ չեն— թէն մէկէ աւելի անգամներ պատահած է որ հայհոյեն Անոր զէմ— ու ընդհանրապէս հարկաւոր կը նկատեն— տեսականօրէն— յեղափոխական հզօր ուժի մը գոյութիւնը ու համոզուած ալ են թէ՛ առանց ատոր՝ կարելի չէ ազգային բարեխաղաղութի ո՛ր է կ'պատահականութիւն ակնկալել ու վերջնական ազատագրումի է՛ն ճշդիմ յոյսն իսկ սնուցանել: Բայց իրենց այս ներքին խորունկ համոզումը երբէք պատճառ մը եղած չէ որ մղուին քաջ մը աննելու զէպի մեծ ու էական ճիշդ, Երբէք

չեն ունեցած այս ազնիւ փորձութիւնը: Ընդհակառակը, տեսակ մը նախապաշարուած ու վեհերոտ նայուածքով հետևած են միշտ յեղափոխական շարժումին, անոր մէջ ամէն վայրկեան սպառնացող վերահաս վտանգին միայն սպասած են զողահար: Ու կարծես զգալով իրենց տկարութիւնը, իրենց բարոյական ու ֆիզիքական անբաւականութիւնը՝ Չոհողութեան ամենէի Հոռանքին առջեւ՝ ու անոր մօտենալու իրենց անկարողութեան շնոստովանուած, այլ թունդ գիտակցութենէն սրտմտած ու ամօթահար՝ ուզած են անգիտել զայն, չտոխուելու, չմատնուելու համար անոր նուիրուելու, անոր երթալու անխուսափելի պարտականութեանը: Իրենց հոգին ալ բաւական ամուր, բաւական մաքուր չէ՛ եղած յեղափոխական Պանդափարին տաճարակրութեանը համար: Եւ ուրիշ կողմ դարձած են անոնք, առերևոյթ ու սին ոգորումներու մէջ փնտելով իրենց փառասիրութեան գոհացումը ու առաւել կամ նուազ բանաւոր ու տրամաբանական զարտուղումներով, նկրտած են մոռնել Պորժին ուղղակի մասնակցութեան իրենց ճակատագրական անընդունակութիւնը:

Նիւթական անկախութեան գոհելի առաւելութիւնը յաճախ տեսակ մը սատար եղած է իրենց մինչեւ ատիճան մը յաջողելու իրենց պատիկ գիտումներուն մէջ: Նոյն իսկ կրցած են երբեմն՝ ուրիշներու քով գուշակուած Գրամին առջեւ հեւացող օտորուկ ամբոխներու երախտաղէտ ուշադրութեանը արժանանալ, առանց սակայն կուտ մը զոհած ըլլալու անոնց համար, երբ անգիտ յեղափոխական բանակին մէկ որ եւ է անուրբ գիտուորը Մաքառումին ճամբաներուն վրայ կ'իյնար, անձանօթ ու անյիշատակ:

Հայրենասէրները իրենց ազգային պարտականութիւնները լիովին կատարած ըլլալ կը համարին, երբ իրենց հանգիստ ու տաքուկ բնակարաններէն շնորհաւորական հեռագիր մը քաշել տան այս ինչ թագաւորին զահակալութեան առթիւ, կամ ցաւակցական պսակ մը գնել տան այն ինչ թագուհիին զիակին վրայ, երբ դիւցազնութիւնը ունենան՝ իրենց զրօսենեակը ձգելով՝ երթալ բարեխօսական այցելութիւն մը ընելու օտար «բարձրաստիճան անձնաւորութեան» մը, կամ օտար հայասերի մը բանախօսութեան ներկայ ըլլալէ վերջ, ելլել բանախօսին ձեռքը թօթուելու:

Հայրենասէրներէն իւրաքանչիւրը իր գործունէութեան մասնաւոր եղանակը ունի: Մէկը, խորունկ քաղաքագէտ, եւրոպական գիւանագիտութեան շուրջը կը զեզերի— առանց երբէք անոր ուշադրութեանը վայրկեան մը արժանանալ գիտնալու— Հայ տառապանքին վերջ մը տալու սլաղարին վստահութեամբը, միւրը՝ եւրոպական հանրային կարծիքին մասնագէտ՝ ատենը մէկ մը ազերսարկու նամակներ զրել կուտայ բոլոր անոնց որոնք բարոյական օժանդակութիւնը պիտի կրնար օգտակար ըլ-

լալ հայկական դատին, ուրիշ մը՝ գթութեան կողմնա-
կից՝ ողորմութիւն կը խնդրէ օտարներէն իր գոթազոյ
ազգակիցներուն համար, կան որ աշխարհքիս շորս ծայրը
գտնուող հայերուն մէջ «կապ մը հաստատելու» կամ
քակուած կապերը միացնելու նպատակով ընկերութիւն-
ներ կը հիմնեն. սե ծրագիրներ կը պատրաստուին, ժո-
ղովներ կը գումարուին, վեճեր տեղի կ'ունենան, ճառեր
կ'արտասանուին, որոշումներ կը տրուին, հանգանակու-
թիւններ կը սկսին ու կը վերջանան: Աղմուկ մըն է
կը փրթի:

Այս բոլորը աղէկ: Մենք չէ որ պիտի հակառակէինք
ո ե է հանրային ձեռնարկի: Բայց Գործը, կենսական,
անհրաժեշտ, անկասելի Գործը: Պէտք չէ՞ որ ամէն
բանէ առաջ անոր մտածենք ազգովին, մեր անբողջ ու-
շայրութիւնը անոր վրայ կեդրոնացնել սորովինք: Անու-
շեղէնէն առաջ՝ ցամաք հացը չէ՞ որ հարկւոր է մար-
դուն կեանքին: Երկրորդական ու զարդի համար եղած
իրարանցումներէն առաջ՝ յեղափոխական գործունէութեան
անմիջական ու հզօր աճուած չէ՞ որ անհրաժեշտ է մեր
ազգային կեանքին:

Պատահած է որ դէմ յանդիման եկած ըլլանք այդ
Հայրենասերներէն մէկ քանիին: Սա միօրինակ ու ան-
խուսափելի երկխօսութիւնը ունեցած ենք իւրաքանչիւր
անգամ:

Մենք ըսած ենք Հայրենասերին.

— Ուրեմն, սիրելի պարոն, կ'ընդունիք որ Յեղափո-
խութիւնը հարկւոր է ազգային ազատագրութիւն, կ'ըն-
դունիք որ եւրօպական միջամտութեան մը հաւանակա-
նութիւնը ցնորք մըն է, երբ անոր առիթ չտայ յեղափո-
խական բուռն շարժում մը, ապստամբական ամեհի ու
տեւական պոռթկում մը, կ'ընդունիք որ Հայր ամէն բանէ
առաջ պէտք է ինք իր վրայ վստահիլ գիտնայ, ուժին
դէմ ուժ կարենայ հանել, Բռնութեան կանոնաւոր ու-
ժին դէմ ընդվզումին անկանոն այլ անպարտելի ուժը...
բայց այն ատեն, սիրելի պարոն, ինչո՞ւ չէք զար մեզի հետ,
ինչո՞ւ չէք միացնել ձեր ջանքերը մերիններուն, ամ-
րացնելու, զօրացնելու համար Յեղափոխութեան պատ-
ուարները ու կը վատնէք ձեր խելքը երրորդական կա-
րևորութեամբ մտահոգութիւններու, ինչո՞ւ չէք քալեր շի-
տակ ճամբէն ու քովստի անելներու մէջ կը սլքտաջ ու
ձեր ետեւէն կը փորձէք տանիլ մարդիկ որ ձեր պատուա-
ւոր այլ մասնակի ձեռնարկներուն աջակցելով՝ իրենց պար-
տականութիւնը կատարած կը կարծեն ըլլալ ու ա'լ հան-
գիստ կը պառկին իրենց երկու ականջներուն վրայ:

Հայրենասերը՝ նեղուած ու շուարած՝ կը պատաս-
խանէ մեզի.

— Բայց, եղբայր, ես արդեւ չեմ ըլլար կոր յեղա-
փոխական բրօքականտին, յեղափոխականներուն գործն
է ժողովուրդին հարկադրել Յեղափոխութիւնը, ես յե-
ղափոխական չեմ... ես հայրենասեր եմ միայն... ես այլ

այս ձեւով կը հասկնամ օգտակար ըլլալ ազգիս... մար-
դու վնաս մը ունիմ... իմ բրածո տարրեր բան է...

Հո՞տ է որ պէտք է ընդմիջել զիրենք: Այդ տարրեր
բան մը ընելու յարատեւ ու ողբալի մտահոգութեան
մէջ կը կայանայ իրենց մեծագոյն սխալը: Յեղ սփոխու-
թենէն դուրս, յեղափոխական գործունէութենէն անջատ
ու տարբեր բան մը ընել կուզեն եղբոր Ա՛հ, յիմար ու վատ
մտածումը: Բայց չեն խորհիր կոր անգամ մը թէ այդ է
զիրենք շարունակաբար անկարողութեան դատապարտողը
ու իրենց տարած ջանքերը անփոփոխօրէն ապարդիւն
հանողը:

Չէ՛, անհատական ու մասնակի ձեռնարկներու եր-
բէք չենք հակառակիր: Բայց անդրդուելիօրէն համոզուած
ենք թէ՛ ա'յն ատեն միայն կրնան գոյութեան իրաւունք
ունենալ ու արդիւնաւոր ու տեւական ըլլալ անոնք, երբ
ըրացոցիչ մասերը կազմեն դիտար ու էական Գործին,
և ո'չ թէ անկից անկախաբար ապրիլ ու շարժիլ յաւակ-
նին: Այս տարրական ըմբռնումէն առաջնորդուելու խը-
նամբին բացակայութենէն է որ—ու ասի դիտուելու ար-
ժանի երևոյթ մըն է մեր հանրային կեանքին մէջ—հայ-
րենասիրական անհատական ու մասնակի ձեռնարկները
չեն կրցած տեւել կամ գնահատելի արդիւնքի մը յան-
գիլ մինչեւ հիմայ, մինչդեռ անոնք հզօր ու անհուն
զարկ մը պիտի տային բուն Գործին, եթէ գային հա-
մեստօրէն, ազնուօրէն լծուելու Յեղափոխութեան սայ-
լին որ բոլոր տարտղնած ուժերուն, բոլոր ցիրուցան
բարիկամքերուն, բոլոր այլազան ու ամուլ մնացած կարօ-
ղութիւններուն միահամուտ ու համերաշխ մղումովը աւելի
չուտ պիտի մօտենար բաղձացուած հանգրուանին:

* * *

Հայրենասերներուն թիւը հետզհետէ շատանալու
վրայ է մեր մէջ: Ամէն օր մեզի կը հասնին նոր հայ-
րենասերի մը երեւումին աւետիսը, նոր ընկերութեան
մը, նոր միութեան մը աղմուկը, ու նոր զգլխիչ առաջա-
դրութիւններու, երազել տուող խոստումներու, խանդա-
վա հրաւերներու յուզիչ ու սրտմկիկ կոչերու արձա-
գանքները: Բնականաբար ոգեւորուելու, իրար անցնելու
պէտք չենք զգար, որովհետեւ գիտենք թէ ի'նչ մտա-
հօգութիւններու, ի'նչ թելազրանքներու ու ի'նչ անգիտա-
կից կամէութիւններու ծնունդ են ատենք:

Այս նօրահաս Հայրենասերներէն շատերը, երէկուան
պայքարներուն մասնակցած չըլլալու խղճահարութենէն
կարծես բռնուած, իրենց երկարատեւ անտարբերութիւնը
քաւել կը թուին տենջալ: Հանրային գործունէութեան
յանկարծական տրամադրութիւններ կը ցուցունեն, ու
բաներ մը ընել կը փորձեն, շատ բան ընելու պատ-
րաստ ու ընդունակ երևալու համար: Մի՛ աճապարէք
խանդաղատիլ այս ազնուական հոգիներուն յայտնու-

թենէն: Սպասեցէ՛ք բոպէ մը:—Շահագործելէ յոգնած նաւթավաճառներ կամ գոհարավաճառներ են, որոնք՝ իրենց ծեր օրերուն՝ զիգած ոսկինին հանգստօրէն մարսել ու իրենց բիւսթիգները խղճի մտօք դարմանել սկսած ատեննին՝ զիւրին ու աժանկէկ ժողովրդականութեան մը վատաոողջ ցանկութենէն բռնուած՝ կամ պարզապէս իրենց անզբաղ կեանքին գգուական ժամանց մը ըստեղծելու համար, կ'ելլեն ընկերութիւն մը հիմնել կը ձեռնարկեն, անոր նախաշահը կամ սեփականատէրը զառնալու հաստատ մտադրութեամբը: Օգտակար ըլլալ, նպատակի մը ծառայել, ազգին համար բան մը ընել համոզուած են թերևս ատով: Բայց, ինչ կրնայ մնիլ արդէն իրենց նաւթացած ուղեղներէն, ինչ կրնայ բղխիլ իրենց լճացած հոգիներէն:

—Հայհոյութիւն...լրբութիւն...պերախտութիւն...
 Ինչ կ'ըսէք կոր... Այսինչեանը, մեծահարուստ կովկասցին է նէ, կը գոչէ գետնաքարչ պնակալէզներու խուճը մը, որ ազգային գործերուն մէջ հարուստի մը մուտքը նախախնամական ու երկնատուր բարեբաղդութիւն մը կը նկատէ:

Ու յարզանքի, քսուրտող փութկոտութիւններու, անանական երախտագիտութեան օահմտեկած ու ստրուկ փառաբանութիւն մը կը բարձրանայ, կը պարուրէ, կը խնկարկէ նոր Հայրենասէրները, երբ զեռ բան մը չեն ըրած, բան մը չեն գոչած անոնք արժանանալու համար այս բոլորին:

Գրամին առջեւ, փորի վրայ երկրպագութեան այս շնչատ արտորանքը մեր հանրային կեանքին այն երեւոյթներէն է որոնց առջեւ կարելի չէ՛ չփրփրալ մոլեգին զայրոյթով մը: Ժողովուրդ մը քր՝ փոխանակ իր սեփական անյաղթելի ուժին գիտակցութիւնն ունենալու ու անոր վրայ կոթնելու՝ իր յուսոյ ու ակնկալութեան նայուածքները Յեղափոխութեան ուխտուած թշնամի՝ այդ շտեռ օարաֆներուն կը դարձնէ՝ զեռ կրնայ սպասել իր ազատագրումին:

* * *

Հայրենասէրները ատենէ մը ի վեր հարուստ դասակարգին մէջ չեն օահմանափակուիր սակայն: Քոփետի ճամբաներու, կողմնակի շարժումներու ձգտումը երթալով կը զարգանայ ժողովուրդին մէջ: Ամէն մարդ բան մը ընել կ'ուզէ առանձին: Ամէն մարդ իր գաղափարը, իր ծրագիրը ունենալ կը կարծէ ու անոր իրագործումին կը հետապնդի: Ասիկա միթիթարական երևոյթ մը ըլլալէ հետո՛ պարզապէս փնտաակար է ու՝ եթէ այսպէս շարունակուի՝ աղէտաւոր կրնայ ըլլալ ազգային փրկութեան հիմնական ու նուիրական Գործին:

Ժողովուրդը չարաչար կը խաբեն՝ անոնք որ կ'ուզեն հաւտացնել իրեն՝ թէ նորանոր միութիւններու, նորա-նոր ընկերութիւններու բազմապատկումը պիտի փութա-

ցընէր իր ճակատագրին բարւոքումը: Յեղափոխականներուն պարտքն է զգուշացնել ժողովուրդը իր այդ կեղծ բարեկամներուն դէմ ու համոզել զայն թէ իր ձեռքովը իր տունը քանդած պիտի ըլլար, քաշալերելով՝ Մարկոսին կամ Թորոսին ունայնամտութեանը, Արամին կամ Կարապետին շահերուն ծառայող ձեռնարկները:

Նոր ու երկրորդական մտահոգութիւնները հարկաւորաբար կը փնտեն մեծ ու տիրական Մտահոգութեան, զայն կը տկարացնեն, կը ջլատեն, կ'անդամալուծեն: Պերճանքի հայրենասիրութեան, պերճանքի ընկերութիւններու, պերճանքի գործունէութիւններու պէտք չունի Հայ ազգը, երբ իր անմիջական, էական ու կենսական Գործը կը բաւէ ինքնին իր բոլոր բարոյական ու նիւթական կարողութիւնները լափելու, սպասելու: Անոնք որ ազգային ինքնամփոփումի ու պատրաստութեան այս օրերուն՝ ամէն առտու հրապարակ կը նետեն նոր բառ մը, նոր անուն մը, նոր խնդիր մը որ Յեղափոխութեան հետ հեռուէն կամ մօտէն ո՛չ մէկ առնչութիւն ունի, անոնք կը դաւաճանեն ազգին նուիրական շահերուն դէմ, ժողովուրդին ուշադրութիւնը հեռացնելով Գործէն, տարտղնելով ուժերը, գրուելով ու բաժնելով աշակցութիւնները, երբ ամէն ժամանակէ աւելի պէտք է որ միացած, կեդրոնացած, սեղմուած ըլլան անոնք մեծ ու անյեղլի իտէալին շուրջը:

Այսօր, զուտ բարեգործական նպատակներու օահմանուած ընկերութիւններէ, որբախնամ ջանքերէ, Երկրին թշուառութիւնը ամօքելու — ինքնին վիթխարի — գործէն գատ, ո՛ր է է հանրային նշանակութիւն ունեցող ձեռնարկ գոյութեան իրաւունք չունի, եթէ ուժով ու անխարդախ կապերով պարաւանգուած չէ Յեղափոխութեան անիւին:

* *

Պիտի գտնուին անշուշտ մարդիկ որոնք խանութի ու կուտակցական անձուկ ու անարգ մտահոգութիւններ պիտի ուզեն տեսնել մեր այս սրտբաց ու անվերապահ խօսքերուն մէջ: Ատոնցմով զբաղելու, զանոնք մեր անկեղծութեանը համոզելու ձանձրութիւնն իսկ չենք ուզեր յանձն առնել:

Մենք պիտի ըսենք միշտ, առանց ծամծմելու, առանց վարանելու, ինչ որ օգտակար ու անհրաժեշտ կը նկատենք ազգային գիտակցութիւնը արթնցնելու ու Յեղափոխութեան գերագոյն շահերը պաշտպանելու: Ու համոզուած ենք թէ տարրական ու անվիճելի ճշմարտութիւններ են ասոնք, ճշմարտութիւններ որոնց առջեւ կոյր ու խուլ մնալ յամառիլը զղջութիւններն է՛ն կակծալին ու է՛ն անօգուտը պիտի երաշխաւորէր ժողովուրդին...:

* *

Շիտակ ճամբէն քալէ՛, Հայ ժողովուրդ, քովնտի ճամբաները պատրանքի ճամբաներ են: ՅԵՂՈՓՈՒՅՈՒԹԻՒՆՆ Է ՇԻՏՈՎ ՃՈՒՄՐԱՌՆ: Անկից միայն պիտի ապրիս, պիտի յուսաս, պիտի հասնիսդուն: Անկից զուրս բան մը չիկայ քեզի համար...

ՀԱՅՐԵՆԻՔԷՆ

Բ.

Պ. Լինչ ուսուհիպատակ Հայաստանէն կ'անցնի թրքահայատակը, ուր հայ ցեղին վրայ իր ուսումնա- սիրութիւնը կ'ամբողջացնէ:

Անդին Անի՝ հայ արուեստին հրաշակերտ աւերակ- ներու ղէզ մը, այցելուին սիրտը տրտմաթախիծ զգա- ցումներով կ'ողողէր, միտքը իմաստասիրական տխրորակ խոհերու ներքև կ'ընկճէր, հո՛ս հրճուանքին արբշտումն է ի տես բնութեան հրաշակերտին՝ «Դրախտանման վա- նին» ու հիատեսիլ լծին: Եւ «պատմական ապագամը» որ քրիստոնէութեան թուականէն շատ դարերով հնազոյն քաղաքակրթութեան մը յիշատակարանները կը կրէ:

Եւ ինչո՞ւ պէտք էր որ այդ բնական զեղեցիութեան հայրենիքէն բարոյական այնքան տգեղ յիշատակներ հե- տը Եւրոպա բերէր Պ. Լինչ:

Գլխաւորապէս Աղթամարն է, մեր պատմութեան նը- լիրագործած սրբավայրերէն մին, որ պանդոկի մը ե- բևոյթը կ'ընծայէ, և կաթողիկոսն ալ անարգ պանդո- կապետ մը: Անգլիացին զայրացկոտ կը մնայ Էջմիածնի հետ այդ հակադրութեան հանդէպ:

Վանէն Պ. Լինչ Բաղէշի ճամբով կ'անցնի Մուշ, «որ Օսմանեան կայսրութեան է՛ն ղէջ կառավարուած քաղաքն ըլլալու աննախանձելի պատին ունի»:

Բայց թրքահայատակ Հայաստանի մէջ քաղաքա- կան մեծագոյն կարեւորութիւնը Էրզրումն է: Ուղևորը 1829ի ու 1877ի պատերազմներուն վրայ խօսելէ յետոյ կ'ըսէ թէ թիւրքերը հիմակ ահեղապէս ամբացուցած են համբաւաւոր «Տէվէ Պոյնուն»՝ կը կարծէ թէ այդ գարուս յառաջիկայ ուսեկթիւրք պատերազմին, Հայաստանի վրայ սուսական յարձակումը տեղի պիտի ունենայ գլխաւո- րապէս Տրապիզոնէն, ուր ցամաք պիտի ելլէ ուս բա- նակը: Սև Մովուն ուսական նաւատորմին ղէմ ան- զօրութեան դատապարտուած են թրքական մարտա- նաւերը:

Եւ այս հետապատկերը, գուցէ՛ մերձապատկեր, կը տազնապէ անգլիացիին հեռագիտակ միտքը, իր հայ-

րենիքին շահերուն վտանգին երկիւղովը: Ռուսիան Էր- զրումի տէրը ըլլալով իր ձեռքին տակ պիտի ունենայ Եփրատը որ Ճէնովացի վաճառականներուն նախկին ճա- նապարհն է ղէպի հիւսիսային Պարսկաստան: Ու նաեւ, ա՛յ անկէ ետքը Ռուսիա ալ ևս պիտի չը հանդիպի ղէպի վտանգի իր յառաջացումը արգիւղ բնականէն կանգ- նուած պատուարի մը: Ի՛նչ պիտի ըլլան այն ատեն Անգլիոյ առևտրական շահերը. մանաւանդ որ այդ շա- հերը օրէ օր պիտի աճին ու բազմանան երբ ծրագրեալ երկաթուղիները շինուին, վերջանան: Պիտի վտանգուի ուրեմն այդ ամենը:

Այս է անգլիացիին մտքին մէջ բեւեռեալ գաղա- փարը. եւ բնորոշինք նաև որ Ֆրանսսա եւս նուազ մտա- հոգակ չէ իր շահերուն տեսակետէն: Ապագային նկատ- մամբ մեծ պետութիւններէ ոմանց այս վախերը կազ- դուրիչ բան մը ունին մեզի համար: Իրենց շահերուն փրկութեան ապահովութիւնը Հայաստանի հիմնական բարեկարգութեան մէջ պիտի փնտռեն: Պարզապէս բա- նաստեղծական զգացում մը, մարդասիրական թոխ մը, հնախուզական հետաքրքրութիւն մը չէ որ կը մղէ ֆրան- սացիներն ու անգլիացիները այս ծանր օրերուն մէջ մեր հայրենիքը վազել, գայն բննել, ուսումնասիրել, և ի- բենց համոզումները աշխարհի ներկայացնել: Ու դիտե- լի է որ եթէ ոչ միշտ բայց ընդհանրապէս այդ համո- զումները մեզի նպաստաւոր կը յայտնուին: Ճշմարտա- սիրութեան աւելի ազգային շահասիրութիւնն է որ կը ներշնչէ մեր բարեկամ օտարազգիները: Ասոնք կ'ըմ- բանեն թէ Հայոց աննպաստ գաղափարներն Եւրոպայի մէջ ծաւալումը շատ պիտի տկարացնէ հայկական դա- տը, պիտի վտանգէ Հայաստանի ինքնավարութեան ա- պագան: Հայը անարգուած, Հայաստանը վատթար վար- չութեան մատնուած, ո՞վ է որ այս տխուր վիճակէն պի- տի օգտուի: Ռուսիան: Եփրատ ու Վոսփոր հակա- հայկական քաղաքակրթութեան մը գիւր պիտի ըլլան:

Պ. Լինչ երկու անգամ ուղևորած է Հայաստան. մէյ մը կոտորածներէն առաջ, մէյ մըն ալ կոտորածնե- րէն ետքը, 1898ին. եւ այսպէս երկու կացութեանց միջևէ բազդատութեանց եզրներ ունի իր ձեռքը:

Այդ ուղևորութիւնը ինքնին քաղաքական ղէպքի մը համեմատութիւնները առած է: Երբուրբ չէր ուզեր որ անգլիացի մը Հայաստանի վիճակին անձամբ սկա- նաստես գտնուի, ու օր մը անաչառ քննադատութիւն մը երևան բերէ. հետեւաբար բաշմաթիւ դժուարութիւններ յարուցած է Պ. Լինչի առջեւ. բայց անգլիացին ամէ- նուն ալ յաղթած և իր առաջադրած նպատակին հա- ստած է:

Ընդհանուր վարչական դրութեան վրայ ընդարձա- կօրէն խօսելով հանդերձ, մեզի համար Վեժմագոյն ա, ղէտքը քիրտերուն Հայաստան ներկայութիւնը կը հա- մարի: Բարեկարգութեանց ներմուծումին ղէմ ահեղ զըմ-

ուարութիւնը Քիւրտերու Հայաստան ներկայութիւնն է: Տասնվեցերորդ դարուն մէջ, կ'ըսէ, Քիւրտերը Բարձր Հայք բերուեցան իբր սահմանապահ զինուորներ, բայց իբր զինուոր իրենց օգտակարութիւնը երկարատեւ չեղաւ, ու սկսան Հայերը կողոպտել ու հարստահարել, անոնց աշխատութեամբը ապրիլ: «Քիւրտերը, կ'ըսէ, Հայաստանի Ալպանիացիներն են, Հին Սերպիոյ բնակիչները. միայն թէ այդ տառապիւնները կրնան օգնութիւն հայցել Սերպիական թագաւորութենէն: Այս է ահա որ Հայերը կը տարբերէ Պալքանեան ազգայնութիւններէն. հայկական թագաւորութիւն մը չի կայ, ո՛ր ՅԱՐԳ, յօղուածը շատ ողորմելի պաշտպանութիւն մըն է իրենց համար:

Գիտելու արժանի է որ Պ. Լինչ շատ աննպաստ չէ Ձերբեկնելու մասին: Թեքսաս այն պատճառաւ որ չէրբեկնելու Անգլիոյ երախտապարտ մեացած են: Ու նաև, Ձերբեկնելուն շահերը կը համաձայնին անգլիական շահերուն: Ո՛չ ապաքէն Ռուսն է Ձերբեկնելու բնական թըշնամին. ուր որ Ռուսը ոտք կ'ոտէ չէրբեկնել արտարած պիտի վճնտուի:

Այս նկատումով չե՛նք կրնար ընդունիլ որ համերաշխութիւն կայ նաև Ձերբեկնելու եւ Հայոց շահերուն միջև: Անշուշտ այս նկատումն է որ թիւրքիոյ մէջ խեղճաւ չէրբեկնելուն մէկ մասը կը պարտաւորէ բարեացակամ երկիւ Հայոց նկատմամբ: Կ'ըմբռնեն թէ Հայաստանի քարեկարգութիւնը կրնայ թէև չէրբեկնելու աւարտութեան վերջ մը գոն, բայց անոնց գոյութեանը ո՛ր եւ է վտանգ չսպանար. մինչդեռ արդի վիճակին անգարման շարունակութիւնը պիտի դիւրացնէ Հայաստանի Ռուսաց կողմէ գրաւումը, գրաւում որ չէրբեկնելուն ալ մահաբեր է:

Առ այժմ կը վերջացնենք Պ. Լինչի հրատարակութեան վրայ այս ամփոփ տեղեկութիւնը: Այս միջոցներու այնքան առատ են, բարեբաղդաբար, Հայոց վերաբերեալ Եւրոպական հրատարակութիւնները, որ չենք կարող ամէնուն ալ ընդարձակօրէն տեղ տալ: Կը բաւականանանք ընդհանուր ծանօթութիւն մը հաղորդելով, այնքան որքան պէտք է հայ մտքին առաջնորդութեանը համար: Իսկ աւելին համար կը յանձնարարենք այդ գրքերուն ընթերցումը, կամ աւելի ճիշտը՝ ուսումնասիրութիւնը:

ԵՐԶԱՆԻԿ ԿՂԶԻՆ

Կրետական Կապոյտ Գիրքը որու մասին մեր նախորդ յօդուածովը խօսեցանք, «Երջանիկն Կրետա» ցընծութեան ազդակը կը խլէ Տէյնի Նիսի գերնէն: Ու ազատական թերթը կ'ընկնելով պաշտօնական տեղեկագիրներուն վրայ, Պահպանողական կուսակցութեան երեսին կուտայ իր յամառութիւնը սրով բազմաթիւ տարիներէ ի վեր կը պնդէր, իբր քաղաքական հաստատելի վրայ, թէ Կրետէ ինքզինքը կառավարելու անկարող է. և այս համոզմամբ էր որ ինքնավարութեան ու եւ ծրարաբար գաղափար ընդդիմադրութեան կը հանդիպէր: Հիմակ ինչ պիտի ըսեն:

Հիմակ ան պիտի ըսեն ինչ որ նոյն իսկ թիւրքերէն ումանք Պուլկարիոյ ազատումէն քանի մը տարի ետքը կըսէին.

— Ինչ տարօրինակ երևոյթ է որ մեր վիլայէթներէն մէկը երբ կը բաժնուի, կըսկսի հարստանալ, բարգաւաճիլ, իր ծախքերը հոգալ. ու ատ ծախքերն ալ աւելի շատ են քան երբ մեր ձեռքն էր անիկա: Ան հողը չէ՞, ան մարդիկը չեն, աս ընտ՞ր կըլլայ:

Կը զարմանան, վասն զի կը մոռնան թէ հինգ դար է յորմէհատ թիւրք ցեղը իբր մարդկութեան պատուհաս մը երևան եկաւ, հինգ դար է, որ անվիճելի ճըշմարտութիւն է թէ «Թիւրքին անցած տեղէն խոտը կը չորնայ»:

Ու մինակ թիւրքին անցած տեղէն չէ որ խոտը կը չորնայ, այլ՝ հոն, ամենուրեք, ուր ազատութեան արեւը առկածածուկ կը մթապնի: Ստրկութեան մութին մէջ մարդն ալ կը հիւծէ, գալարն ալ կը գօտնայ:

Երբ կը կարգանք Կապոյտ Գիրքը, կը հանդիպինք այնպիսի տեղեկութեանց որոնք մահմետականներն իսկ Ազատութեան ապառաջներ ծարաւներ կը ներկայացնեն: Մահմետականները քրիստոնեաներուն շփմտահոլութիւն ցոյց կուտան Եօրկիոս իշխանին, կը սիրեն զայն ու կը յարգեն: Ու պատահած են առիթներ յորս քրիստոնեաներէն աւելի յարգանք ցոյց տուած են հելէն իշխանին: Ահա օրինակ մը:

Իշխանը 1899 մարտ 20ին անձամբ կը բանայ կրետական ընդհանուր ժողովը որ 136 քրիստոնեայ եւ 50 մահմետական երեսփոխանէ կը բաղկանայ: Նախագահի ընտրութեան պահուն 129 քրիստոնեայ եւ 45 մահմետական անգամ ներկայ գտնուած են: Նախագահութեան համար երկու անգամներ դէմադէմ էին, Տէր. Սֆաքիանաքիս եւ Պ. Միխիլտաքի: Եօրկիոս իշխանը առաջինին ընտրութեանը փափաքող էր. քրիստոնեայ պատգամաւորները երկու մասի բաժնուեցան, առանց

կարեորութիւն ընծայելու իշխանին փափաքին ու մեծա-
 մասնութիւնը Պ. Մխելիտաքին պիտի շահէր, բայց բո-
 լոր մահմետականները, 45 երեսփոխան, խմբովին ի-
 րենց քուէն տուին անոր որուն ընտրութեանը բարձրա-
 գոյն քօմիտէրը ըղձացող էր: Մահմետականներուն ըն-
 թացքը ուշադրաւ եղած է նա մանաւանդ այն նկա-
 տումով որ Տքթ. Սֆաքիանաքիս երբեմն նախագահն էր
 Կրեմէի ապստամբական Քօմիտէին: Մահմետականներն
 ուրեմն այնքան հաշտուած են արդի կացութեան որ
 նոյնիսկ շնորհապարտ կը մնան նախկին ապստամբա-
 պետին: Ո՛չ ապաքէն վերջապէս քրիստոնիայ ապստամբ-
 ներուն շնորհին էր որ իրենց ալ ազատեցան թրքա-
 կան լուծէն: Ինչ կ'ըսուի թող ըսուի. Կրեմտացի մահ-
 մետականներն ալ ցեղով յոյն են, ինչպէս լեզուով: Ի-
 րենց արեւնակիցներուն հետ կրօնական խտրութիւնը
 պատճառ մը չէ որ օտար ցեղ թիւրքը սիրեն: Միթէ
 Արապը, միթէ Եկմէնցին որ մահմետական են կը սիրեն
 օտար ցեղ թիւրքը, լոկ այն պատճառաւ որ հաւատա-
 կից են: Սակայն քրիստոնեայ և մահմետական ցեղա-
 կիցներու խառնուրդին մէջ, ուրացեալները կը կարծեն
 թէ քրիստոնեայ վարչութիւն մը իրենց աղիտաբեր պե-
 տի ըլլայ, կամ գոնէ՝ իրենց մեծամիտ ու աններելի բռ-
 նապետութիւնը պիտի փոխանակէ քրիստոնէից կողմէն
 նմանօրինակ վարժունքով մը: Բայց երբ փորձա-
 ութեամբ կը տեսնեն թէ իրենց կասկածներն անհիմն
 եղած են, և թէ նոր վարչութիւնը զիրենց հանգիստ
 ու երջանիկ կը պահէ, ան ատեն կը լսեն արիւնի ձայնին,
 ցեղային արիւնի, որ միշտ աւելի զօրեղ կը հնչէ քան
 թէ ալլազգի ցեղի վը իր հետը բերած զէնին խոպոտ
 հազազը:

Մենք հայերս որ կրետացիներուն երջանկութեան
 բաղակից գանուելու ցանկացող ենք, եւ հաստատա-
 պէս կը յուսանք մեր արդար փափաքին տիրանալ մեր
 աննկուն ջանքերովը, մենք շատ ուրախութեամբ կը
 տեսնենք Կրետական Կապոյտ Գիրքին յայտարարութիւն-
 ները. վասն զի անոնց փարատելով կարգ մը նախա-
 պաշարութեան որոնցմէ կ'օգտուին քրիստոնեաներու ա-
 զատագրութեան թշնամիները, անոնք Եւրոպայի մտքին
 առջևէն առապարները կը խորտակեն ու ճամբաները կը
 հարթեն մեր գատին համար նպատատար տրամադր-
 ութեանց առջև:

Երբ մահացու հարուածը կը տրուի այն ենթադրու-
 թեանը թէ «Կրեմէն կարող չէ ինքզինքը կառավարել»,
 ա՛լ ի՛նչպէս հնարաւոր պիտի ըլլայ ուրիշ ցեղերու
 համար ևս շարունակել այդ օրինակ հաւաստումներ
 որոնք փաստերու վրայ չեն հիմնուած, և մանաւանդ որ
 կը հերքուին պերճաբարբառ փորձերէ: Եթէ Կրեմէն,
 եթէ Պուլկարիան կարող են իրենց զիրենց կառավարել,
 հապա Հայաստան: Ո՛ր ցեղը հայէն աւելի, — կամ
 աւելի ճիշտը՝ ո՛ր ցեղը հայուն չափ հոյակապ վարիչ-

ներ ընծայեց այն պետութիւններուն որոնց իշխանու-
 թեանը ներքէ ընկճուած է: Չինուորական, ելմտական,
 դիւանագիտական, քաղաքական, վերջապէս երկրի մը
 վարչական կեանքը կազմող ամէն ասպարէզներուն մէջ
 Հայը առաջնակարգ տեղ մը զբաւեց Ռուսիա, Պարս-
 կաստան, Թիւրքիա, Եգիպտոս և նոյն իսկ Աւստրիա
 ու Հունգարիա: Այն խոհուն մտքով ու տաք օրտով
 պրուած զրքին մէջ զոր մեր ընթերցողներուն ընդար-
 ձակօրէն ծանօթացնելու կը հետամտինք, Պ. տը Գոն-
 թանտն այդ բոլոր օրինակները աչքին առջև ունե-
 նալով է որ կը յայտարարէ թէ երբ օր մը հայ ինք-
 նավարութիւնը հիմնուի, գոնէ Միջերկրականին եզերք-
 ները, Եւրոպա հանդիսատես պիտի ըլլայ իմաստուն
 վարչութեան մը և տնտեսող մատակարարութեան տե-
 սարանի մը որ հակադրութիւն մը պիտի ներկայացնէ
 թրքական իշխանութեան տակ գանուող ուրիշ նա-
 հանգներուն կառավարական վարք ու բարքին հետ:



Իտալացիներուն վայելած հանգստութիւնը և ազատու-
 թիւնը ապացոյց մըն է թէ Թիւրքիոյ այն նահանգնե-
 րուն մէջ ուր եւրոպականացեալ վարչական դրութիւն
 մը կը ներմուծուի, հոն իտալացիները վախճալու ունեն
 ճառ մը չունին: Ինչո՞ւ միևնոյն ճշմարտութիւնը մեր
 երկրին համար ալ ճշմարտութիւն չհոչակուի:

Անշուշտ պիտի առարկուի թէ Կրեմէ քրիստոնեա-
 ները մեծամասնութիւն կը կազմեն. բայց նոյն իսկ այս
 առարկութիւնն է որ մեր գատին կը ծառայէ: Երբ բարե-
 կարգեալ նահանգի մը մէջ իտալացիները փոքրամասնութիւն
 ըլլալով հանգիւրձ, բնաւ նեղութիւն չեն կրեր, ու մեծա-
 մասնութեան բռնութիւնը չծանրանար իրենց վրայ, ի՛նչ-
 պէս ուրեմն կարելի է առարկել թէ հոն ուր որ մեծա-
 մասնութիւն կը ներկայացնեն, հոն է որ իրենց պիտի
 զոհուին փոքրամասնութեան շահերուն եւ նկատու-
 ներուն:

Կապոյտ Գիրքը ցոյց կուտայ թէ պետութիւն-
 ները առանձնաշնորհեալ կզգրին շահերուն պաշտպա-
 նութեանը համար մէկ տեսակետէ մը կ'առաջնորդ-
 ուին: Հաւասարութեան սկզբունքը գործադրել տալ
 ամենուն համար: Ո՛չ մեծամասնութեան, ո՛չ փոքրա-
 մասնութեան խնդիր իրենց համար նշանակութիւն մը
 ունի: Խղճի ազատութիւնը ամենուն համար, ապա-
 հովութիւնը ամենուն համար, տուրքը ամենուն համար:
 Ամէն Կրետացի իր երկրին զաւակն է: Ինչպէս հողը,
 ինչպէս ծովը հաւասարապէս կը վայելեն ամենքն ալ,
 նոյն եւ հաւասարապէս պէտք է վայելեն քաղաքական
 հիմնարկութեանց բարիքներն ալ:

Կրեմէի կազմակերպութիւնը ցոյց կուտայ թէ թրք-
 քական նահանգ մը կրնայ՝ առանց ունենալ անպատեհու-

թեան՝ Զուիցերիա մը դառնալ։ Ո՛չ ապաքէն այդ ազատութեան աշխարհին մէջ ալ տարբեր են կրօնները, տարբեր՝ լեզուները, բայց ամէնքն ալ դաշնակցեալ կ'ապրին հանգիստ և ազատ։ Կրետէի փորձը կրկնուելով ահական Թիւրքիոյ ո՛ր եւ է հայկական մէկ նահանգին մէջ, բարենորոգումի խնդիրը ան ատենն է որ գործնականապէս լուծուիլ կը սկսի։ Կրետէ հայկական նահանգի մը, հայկական նահանգ մը՝ միտնորուն օրինակը կը հանդիսանան։ Ու ան ատեն Հայկական Կապոյտ Գիրքը մըն ալ «Երջանիկ Հայաստան» աղաղակը պիտի խլէ եւրոպական մամուլին բերնէն։

Ահա ինչու համար կրետական Կապոյտ Գիրքը ոչ միայն մեզի իբր մարդ կը փոփոխէ, այլ եւ իբր հայ հորիզոն մը ցոյց կուտայ ուր աչքերնիս պէտք է յափ։ Եւ ուր սակայն ժամանելու համար պէտք է յաճախ աչքերնիս ետ դարձնենք Կրետէի վրայ, և ճամբանիս օտար վիճակէ։

ԿԱՄԱԽՈՐՆԵՐԸ

ՎԱՂՈՒԱՆ ԿՌԻԻԻՆ...

Վիժած ու անարին հօգիներու ընդերկար հպումէն շլատուած, աննպատակ ու դատաւիջ սերունդի մը դաժան ու գիտակից եսականութենէն զայրացած, Զոհողութեան ու Հաւատքի հետապնդումներէ ձեռնունայն ու յուսահատ դարձի իրիկուն մը, ձգեցի Ստրկութեան Մայրաքաղաքը ու ճամբայ ինկայ դէպի անձանօթ ու հեռաւոր Գաղութիւն տարագիր ու եղբայրական ամբօններու։

Անշատուելու, փախչելու, անցեալէն մերկանալու ծարաւի տենջանք մը կուրծքս կ'այրէր եւ ուժասպաս օրունքներս կը մղէր գահավէժ ոտուռներու։

Ետիս, կամաց կամաց կը մեռնէին ձայները, ու կ'իջնէր, կը նուազէր զժնդակ աղմուկը բոլոր ուռած, բորբոքած մոլուցքներուն, բոլոր թունաւոր ու անվհատ հեռերուն, բոլոր շնական խաբէութիւններուն, բոլոր անզուսպ ու մոլեգին մասնութիւններուն։

Տատանելի էր ճամբան, այլ կազդուրիչ՝ նոր հորիզոնին բարերար խաղաղութեամբը ու մոռցնող լուութեան մայրական մերձեցումովը։

Ու զգացի որ ծերացեր էի։ Ուտերս կը փլչէին եւ ըրտասարդ պատրանքներու քայքայումին տակ ու քայ-

լերո՝ ունայն ցնորքներուն ետեւէն հեւի հեւ վազելէ յոգնած՝ խեղճօրէն կը դանդաղէին։

Ու ամբողջ վատնուած կեանքիս անձեռնունելի կորուստին գիտակցութեանը հետ, ներսիդիս կ'արթննար հիմա ցաւագին վախը թէ մի գուցէ ա՛լ անօգուտ ըլլալի նուիրական Կրիւին, որուն կարմիր երազը ապրեր էի, այլ որուն չէի մասնակցեր տակաւին, անկարող միտներն ալ քաշել հետս տանելու և շափազանց վատ՝ անշուշտ՝ միս մինակ անոր մէջ նետուելու...։

* * *

Տիւեր ու գիշերներ ճեղքել անցնելէ վերջ, աշնան վերջալոյսի մը անհուն հոգեվարքին առջեւէն շտապելու վրայ էի, երբ յանկարծ մարդկային ձայներ լսեցի հեռուէն։ Բիրտ ու խոպոտ ձայներ էին, բայց օրքան անուշ կուգար՝ անոնց հզօր ու աններդաշնակ անկեղծութիւնը՝ յղկուած ու փափուկ ձայներու յանկուցիչ ու ուրիշմիջ կեղծիքին վարժուած ականջներու։

Հասկցայ որ Գաղութիւն մօտեցեր էի։ Պահ մը վերջը դէմս ելան քրտնաթոր ու պարտասած մարդիկ, որոնք օրն ի բուն դատելէ կը դառնային։ Ու անոնք մօտեցան ինձի, բարեացակամ ու խնդումներեմ, ու կարեկցութեամբ ձեռքէս բռնելով՝

—Եկո՛ւր, եղբայր մըն ես գուն ու յոգնած կ'երևիս ըլլալ, եկո՛ւր մեզի հետ, ըսին ինձի, ու տարին, իրենց տարագրի պարզուկ սեղանին շուրջը նստեցուցին զիս, ու Հայրենիքին վրայով կարօտի ու ակնկալութեան խօսքեր սկսան ընել։

Ու դեռ ըսին անոնք ինձի։
—Գուն ա՛ն ես արդեօք որուն մենք կը օպաւելինք, ըսէ՛, ուսկի՞ց կուգաս, ա՛ն ես գուն որ մեզի պիտի բերեր նուիրական Հրամանը ու խոյանքին վճռական Նշանը պիտի տար մեր անըմբեր ու ծառացող վրէժխնդրութեան... մե՛նք հայրերը, մե՛նք եղբայրները, մե՛նք զաւակներն ենք անոնց զորս խողխողեցին... մե՛նք ճողպարածներն ենք որոնք չգիտցան անաբար մեռնիլ... մե՛նք փախչողներն ենք որոնք նայուածքները Ետին մեացին... ըսէ՛, գուն ա՛ն ես որուն կը սպասէինք...։

Ու ակամայ լուութենէս յուսալի՛ր՝ Հաստատական վանկի մը ակնդէտ՝ անոնք շարունակեցին։

—Մենք կամաւորներն ենք այսուհետև, որոնք կը ուրիշ ու զոհուիլ կը տենջան Գաղափարին սիրուն... քանի՛ անգամ զիմեցինք, քանի՛ անգամ աղերսեցինք որ ընդունին մեզի Յեղափոխական Բանակին մէջ, բայց մեր ձայնը լսող չեղաւ... «չարժելու ատեն չէ՛ հիմա» ըսին մեզի ու թուղթի ծրարներ զրին մեր առջին... օ՛, ըսէ՛, գուն ա՛ն ես որ նոր խորհուրդը պիտի տայ մեզի, ա՛ն ես որ պիտի պատրաստէ, պիտի առաջնորդէ մեզի Վաղուան Կրիւին...։

Խելարեղ կը նայէի իրենց։ Քանի մը անգամ բացի

չրթունքներս, ըսելու համար արդ զսխալն ու մոլորումն ու փառութիւնը իմ անցեալիս, խոստովանելու բոլոր ոչնչութիւնն ու ունայնութիւնը իմ երիտասարդ օգործունեութեան ու ներողութիւն խնդրելու անոնցմէ բոլոր փառութիւններուն, բոլոր դատաւարութիւններուն, բոլոր արհամարհոտ անկարողութիւններուն համար որոնք իմ կեանքս շինեմ էին: Բայց լեզուս կապկպուեցաւ կորզիս մէջ, ու լռեցի ես նորէն:

Ու անոնցմէ մէկը, եկաւ քովս նստեցաւ ու սա միամիտ ու սրտառուջ օրտակցութիւնն ըրաւ ինձի:

— «Երբ՝ դեռ տասնութեան պատանի մը՝ յեղափոխական դրօշին տակ մտայ, այդ օրէն ուխտեցի որ գործնական յեղափոխական մը ըլլամ: Բայց կը ցաւիմ, որ՝ հակառակ քանիցս ըրած դիմումներու՝ բաղձանքս չիրագործուեցաւ: 1894-95ի Հայրենիքի աղէտաւոր օրերէն առաջ դեռ անկարող կը գտնուէի զիս յեղափոխական կեանքի ու խորհուրդ կուտային որ սպասեմ: Եւ ահա սարսափելի կոտորածները վրայ եկան... Յեղափոխութիւնը կանգ առաւ ատեն մը ու շուարումի ու անստուգութեան շրջան մը սկսաւ: Բայց ես, համոզուած յեղափոխական մը, անդրդուելի մնացի իմ գաղափարիս մէջ. առանց վհատելու գործեցի եւ կրցածս ըրի Յեղափոխութեան ծառայելու համար: Բայց դեռ նպատակիս չի կրցայ հասնիլ: Իմ տենջանքս է, ինչպէս ըսի, գործնական յեղափոխական մը ըլլալ: Այդ բուն տենջանքս պատճառ եղած է միշտ որ անհաստատ ու անօրոշ կեանք մը ունենամ: Թէև առիթներ պակասած չեն ինձի լաւ ապագայ մը շինելու, բայց ես չլանացի օգտուիլ այդ առիթներէն, որովհետեւ իմ միտքս առաջին պատեհութեամբ Հայրենիք երթալ է, հոն իմ տառապող եղբայրներուս մէջ օրբազան պարտականութիւնս կատարելու: Դժբաղդաբար տարիները կը սահին, կ'անցնին վրայէս, առանց իմ երազս իրականացնելու: Հիմա, որ քսանրեօթը տարեկան եմ, կը խորհիմ թէ ժամանակ է ալեւս այս անստոյգ կացութեանս վերջ մը տալու... Վաղը նորէն պիտի երթամ Յեղափոխութեան Դուռը գարնեմ, հարցնելու համար թէ զինուորի պէտք ունի՞նք եւ ըսելու թէ ես պատրաստ եմ իրենց տրամադրութեան տակ...»

«Ք...ի կանոնաւոր զօրաբանակին մէջ զինուոր մըն էի վերջին պատերազմին եւ ատկէ զատ նահանգային զօրաբանակի մը մէջ երկու տարի զինուորութիւն ըրած եմ: Առաջին կարգի նշանաձգութեան պատուանշանը առած եմ: Ասոնք կ'ըսեմ օրովհետեւ կարեւոր բաներ են զօրս պէտքէ գիտնաք...»:

Լռեց: Չմայլած կը մնայի: Ուրիշ մը մտեցաւ:

— «Այսօր ալ իմ խիղճս զիս կը տանջէ, ըսաւ ան, ձեռքը կուրծքին դնելով, իմ նպատակս է Հայրենիք երթալ... Հայրենիքի օրըն համար տարիներէ ի վեր պատրաստութիւն տեսած եմ ես, ...ի է՛ն զօրաւոր տեսակը

շինել օրովեցայ... ես բրօքական ընող կամ շրջիկ գործիչ մը չեմ... ինձի ինկած ամէն գործ կատարելու պատրաստ եմ... եթէ Տէր կամենայ, երթալէս վերջը կը հասնեաք... իմ նպատակս չէ՛ ուզած տեղս երթալ... Յեղափոխութիւնը ո՛ւր որ ուզէ կրնայ զիս զրկել հոն...»:

Եւ ուրիշներ, ուրիշներ մտեցան ինձի տակաւին, ու անձուիրութեան ու մաքառումի ահաւոր, անպաճոյճ ու սխրալի խօսքեր ըրին ինձի: Այս մարդիկը զիս կը սահմակէին ու կը օրտապնդէին, իրենց հանդարտ ու հաստատ առաջադրութիւններովը, իրենց նետուելու, խոյանալու, զոհուելու ամենի կամաւորութեամբը: Ինչպէս չէի ճանչցեր, չէի հասկցեր, չէի գուշակեր զիրենց աւելի կանուխ: Ու հիմակ կը տեսնէի թէ ո՛ւր պէտք էր փնտռել, ո՛ր անշուք ու խոնարհ խաւերուն մէջ, անձնուրացութեան ու հաւատքի կոյս հօգիները հարկաւոր վերջնական Չոհարեումին համար, թէ ո՛րիկից պիտի ծնէին փառաւոր հերոսները Վաղուան կոխին:

Հայեր կային, մարդէր կային զիմացս... ու ինձի թուեցաւ որ ապերասան կենդանութիւն մը կը բարձրանար, կը յորդէր, կը փոթորկէր ներօրհիս: Կ'երիտասարդանայի: Ոտքերս կ'ամբանային հողին վրայ ու դատակներս կ'երկարէին, կը պրկուէին, կը օպառնային, գերագոյն հարուածներուն փորձութիւնովը:

Ոտքի ելայ հօկայական: Ընդվզումէն մաքրագործուած ձեռուներս անհունօրէն անոնց ուսերուն վրայ զրի ու կամաւորները մագնիսացած այս հպումէն սկսան ետեւէս գալ, լաղթական երգը մանչելով Վաղուան կոխին...:

ԱՐՏԻԿԵԼԵԱՆ ԽՆԴՐԻՆ ՆՈՐ ԵՐԵՒՈՅԹԸ

Չինական խնդիրը հիմակ կը գտնուի այնպիսի պայմաններու մէջ որ ահեղ խառնաշփոթութեան մը վրասանգը չսպառնար այլ եւս Երրօպայի: Եւ մեծ պետութիւնները կը պատրաստուին իրենց բոլոր մտատանջութիւնը նուիրել Արեւելեան խնդրին, որուն լուծման եղանակը եթէ ամէնուն համար շատ մեծ կարեւորութիւն ունի, բայց մասնաւորապէս Ռուսիոյ համար «մահու եւ կենաց» հարց մըն է:

Լուծման այդ եղանակները Անգլիոյ մէջ բազմակողմանի ուսումնասիրութիւններով կը քննուին, ու նոր շրջանի մը համար քաղաքական ծրագիրներ կը գծուին: Ընդհանրապէս թէ՛ պահպանողական, թէ՛ ազատական կուտակցութիւնները Ռուսիոյ բարեացակամ կ'երկին, ու

կը պաշտպանեն ուստաէր քաղաքականութիւն մը որուն մէջ կը տեսնեն Անգլիոյ շահերուն ապահովութիւնը։

Հոնտոնի մեծ հանգէս մը, Տօրքեայրի Րիվին, յուսիսի եւ յուլիսի թիւերուն մէջ Ռուսիոյ ներքին կառավարութիւնը լաւ քննելով միանգամայն կը պարզէ Արևելեան ինքզինն նոր երևոյթը։ Այդ յօդուածները Անգլիոյ մէջ շատ ուշադրութիւն գրաւեցին և ապահովաբար մեր ժողովուրդն ալ հետաքրքրութեամբ պիտի տեղեկանայ անոր պարունակութեանը, զոր ամփոփելով պիտի ջանանք մեր ընթերցողներուն պարզել։



Անգլիացի յօդուածագիրը Ռուսիոյ արտաքին քաղաքականութեան նոր ձգտումը պարզելէ առաջ, իր վերջին տեսութեան մէջ նախ համառոտաբար կը ծանօթացնէ Հիւսիսային մեծ կայսրութեան ներքին վիճակը։

Նիքօլա Բ. ին թագաւորութիւնը յուսմիտաբարութիւն մը եղաւ ամէն անոնց համար որոնք կը կարծէին թէ նոր իշխանութիւնը ազատական ոգով բարենորոգումներու թուական մը պիտի ողջունէ, իբր հակադրութիւն մը Ալեքսանդր Գ. ի երկաթեայ վարչութեան։ Բայց երիտասարդ Չարը պարզապէս իբր ոչնչութիւն մը երևան եկաւ։ Դարու կէսէ ի վեր Մեծն կատարինէէն մինչեւ Ալեքսանդր Գ. բոլոր ուսական ինքնականները իրենց ներշնչած էին կայսրութեան քաղաքականութիւնը։ Խելացի կամ ոչ, իրենց՝ Չարերը, եղած էին Ռուսիոյ միակնիւն վարիչները։ Իսկ Նիքօլա Բ. պարզապէս հայելի մըն է որ կը ցոլացնէ իրեն մօտեցող բոլոր դէմքերը, ինչքան ալ իրարու ներհակ հանդիսանան անոնք։ Մերթ ասօր, մերթ անոր կը յարի։ Այս տկարութիւնը կը վերագրուի Չարին հիւանդոտ վիճակին։

Ռուսիոյ մէջ ազատականութիւնը յաղթական չէ, բայց երկաթե բռնապետութիւնն ալ զօրեղ չէ։ Կեդրոնին տկարացումը կայսրութեան բոլոր իշխանութիւնները տկարացուցած է։ Եւ այժմ պետութեան ամբողջ յոյսը մէկ անձի մը վրայ կեդրոնացած է, ելմտական նախարար Պ. առ Վիլյզէի վրայ։ Արտաքին զօրժերունախարարը այսինչը կամ այնինչը կրնայ ըլլալ առանց ո եւ է անպատեհութեան, բայց առ Վիլզէն է որ Ռուսիան կը բռնէ։ Ու ելմտական նախարարը Ռուսիոյ փրկութիւնը Եւրոպայի խաղաղութեան անվրդով պահպանումին մէջ կը փնտռէ։

Պ. առ Վիլզէի անսահման խաղաղասիրութիւնը կը բացատրուի Ռուսիոյ տնտեսական վիճակին տաքնապովը։

Ռուսիա հարիւրին իննսունեակութիւն երկրագործ է, բայց ողորմելի երկրագործութիւն մը, զուրկ գիտութենէ։ Ճարտարագործութիւնը կարող չէ ինքնիրենը ապրել պէտք է որ պետութիւնը նիւթական նպաստ առնանոր, եւ միանգամայն զայն պաշտպանէ արդելիչ մաքսատուր-

քերով, ու ամէն տեսակ այնպիսի կարգադրութիւններով որոնք սպառող ժողովուրդին շահին բոլորովին կը հակառակին։ Եւ հարիւր միլիոն երկրագործ ժողովուրդն է որ պիտի աշխատի ու կերակրէ ու պահպանէ ճարտարագործութիւնը, բանակը, նաւատորմը, պետական բոլոր ծախքերը, և պիտի հայթայթէ երկաթուղիներու կառուցման ստակը։ Այդ խեղճ ժողովուրդին հոգին բերանը եկած է. բայց հնարաւոր չէ անոր բնոր թեթեւեղ, վասն զի ան առեն Ռուսիա պիտի պարտաւորուի սնանկութիւն հրատարակել, վար իջնել մեծ պետութեան աստիճանէն ուր հասած է այնքան զոհողութիւններով, և հրաժարել ընդարձակման ամէն խորհուրդներէն։

Միեւնոյն ատեն քաղաքներն ալ վտանգաւոր վիճակի մէջ են։ Դրամապետութիւնը եւ ընկերվարութիւնը իրարու դէմ կը կանգնին. քիչ շատ ուսում օտաքած անգործ, աղքատ երիտասարդութիւն մը սպանալից կեցած է։ Եւ Ռուսիա որ օրթօտոքսութեան ու միահեծան ինքնակալութեան վրայ կառուցուած է, ահա՛ իր հիմերէն կը խախտի։

Այս տագնապալից վիճակին մէջ է, որ Պ. առ Վիլզէն աչքերը ապագային վրայ յառած երկաթե ձեռքով մը կը վարէ Ռուսիան, որուն փրկութիւնը իրեն շատ հեռու չերևնար։ Երբ օրպերական երկաթուղիները աւարտին այն ատենն է որ Ռուսիա պիտի ազատի, և երկիրը հիմնովին պիտի բարեփոխուի։ Պէթ այսպէս կը հաւատայ ելմտական նախարարը։

Այդ աւարտման օրը աւետման օրը պիտի ըլլայ։ Դրոնք զրամագլուխները Ռուսիան պիտի ողողեն. ճարտարագործութիւնը իր ծանր բեռէն թեթեւալով ազատօրէն պիտի զարգանայ, հզօրանայ։

Ու այդ երջանիկ օրը տեսնելու համար Ռուսիա պէտք ունի որ Եւրոպական խաղաղութիւնը չվրդովի։ Պատերազմը իր մահն է։

Բայց ուրիշ ահեղ հարցում մը կը կանգնի իր դէմը։ Եւրոպայի արդի վիճակին մէջ խաղաղութեան անընդհատ շարունակութիւնը Ռուսիոյ մահուան դատակնիքը չպատրաստե՞ր։ Այս հարցումին պատասխանն է որ կը փնտռուի Տօրքեայրի մէջ։

Ռուսիա աշխարհակալութեան ծրագիր մը ունէր զոր Մեծն-Պետրոսէն ի վեր հանդարտօրէն կը գործադրէր և կամաց կամաց զէպի նպատակակէտը կը դիմէր, միշտ յաջողութեամբ։ Այդ ծրագիրն էր՝ յառաջանալ զէպի Միջերկրական, զէպի Խաղաղական ովկիանոս, զէպի Հնդկական Ծոցը Պարսկական Ծոցին միջոցաւ։ Այդ ծովերուն մէջ է Ռուսիոյ ազատագրութիւնը իր բանտարկելութենէն։

Քայլ առ քայլ զէպի ազատութեան ծովերը կը յառաջանար, բայց միեւնոյն ատեն աշխարհի կացութիւնը կը փոխուէր, ու տաս տարուան մէջ օտեղծուեցաւ նոր

վիճակ մը որ ահեղապէս սպանալից է ուսուական ծրարագիրներուն: Այդ ծրագիրները այլեւ ոչ նախկին քաղաքականութեամբ կրնան յաջողապէս գործադրուիլ, ո՛չ ալ խաղաղութեան պահպանումը երաշխաւորութիւն մըն է: Ընդհակառակը, խաղաղութիւնը մահաբեր է Ռուսիոյ համար: Կրնայ կէս ճամբան մնալ, կորսնցնել այն բոլոր արդիւնքները զոր մինչեւ հիմակ ձեռք բերած է:

Կար ժամանակ մը՝ երբ Ճարոն տակաւին չէր արթնցած ու մօտիկ Արևելքն ալ Փերմանիոյ աջքին զինուորի մը սովորը չէր արժեք, այդ ժամանակը Ռուսիա կրնար ազատութիւն համբերել և սպասել որ պտուղը հասունայ ու ինքնիրենը ինչայ Զարին ձեռքբերուն մէջ: Իր դէմը ո՛վ ունէր Բեդրպուրիկ որ վախնար Օրէօր ինչալու վրայ Քիւրքիա մը, քնացող Չինաստան մը, չափազանցօրէն տկարացեալ Պարսկաստան մը: Եւ այս երեքին ետեւ կը կանգնէր Անգլիա մը, որ թէև մեծ զօրութիւն մը, բայց՝ ծովային զօրութիւն, ուստի և Ռուսիան ներքէն հարուածելու և վերաւորելու անկարող: Անգլիա իր անզօրութենէն զգացած որոնեղութիւնը անարգ ցոյցերով կը յայտնէր միայն:

Այս էր, տասը տարի առաջ, ընդհանուր կացութիւնը, ուստի եւ Ռուսիա կրնար վտառահօրէն դիտել ապագան, յառաջանալ քալլ առ քալլ ու ոտու մեքերը ընել այն ատեն երբ նպատակաւոր պատեհութիւնը ապահովաբար ներկայանար: Այս վիճակին անփոփոխ շարունակութեամբը Բեդրպուրիկ կատարելապէս ազատ պիտի մնար ինքը որչիլ գործելու յարմարագոյն ժամանակը, ու արտաքին քաղաքականութեան մեծ խնդիրները առկախ պահելով մինչեւ այն ատեն, զբաղիլ «ներքին զարգացման գործովը» որուն կակնարկէր Պ. տը Կիրոս քոսն տարի առաջ: Եւ իր ուզած ատենը, իր ուզածին պէս իր ճամբաները կը բանար գէպի ազատ ծովը: Բայց ահա մէն հաշիւ ջուրը կ'իյնայ, ամէն նախատեսութիւն կը խանգարուի, վասնզի տասը տարուան մէջ շատ բան փոխուեցաւ:

Այս տաս տարուան ժամանակամիջոցին Ասիա կ'արթննար, Եւրոպական քոսներ մը՝ որուն կը միանային Ճարոն եւ Ամերիկա՝ կը միջամտէր Չինաստան, ու Փերմանիա գերակշիռ դեր մը կը ստանձնէր Պօլիս, Փերման ճարտարագէտները Վոսփօրին վրայէն կամօրջ մը ձգելու ետեւ են, ու յառաջիկայ տասնամեայ շրջանի մը մէջ Պաղատաթի երկաթուղին գերմանները մինչև Պարսկական Մոցը պիտի տանին: Մանչուրիան երկրորդ Եգիպտոս մը կը դառնայ որ Յրանստան իր կոկորդին վրայ ունի: Այս վերջին չարագուշակ տասնամեակը նաև ցոյց տուաւ որ Անգլիա, Փերմանիա և Ճարոն միաբանելով կրնան Ռուսիան ետ քշել թէ Մայրագոյն եւ թէ Մօտիկ Արևելքի իր բոլոր նպատակակէտներէն ուր հասնելու կը հետամտի Մեծն Պետրօսէն ի վեր: Այդ երբեակ միաբանութիւնը կրնայ Ռուսիոյ ներքին բոլոր գործերը

անօրինակ կործանումի մը առաջնորդել, ու տաք ջուրերուն մօտեցող պետութիւնը ետ գարձնել իր ճամբէն, զարու մը համար սառնամանիքներուն մէջ բանտել զինքը և բեւեալին ծովերը կը մը քնտոնելու հարկադրել:

Այս վտանգաւոր կացութիւնը օտեղծուեցաւ Ռուսիոյ համար, ու անիկա պարտաւորեալ է օր մը չէ օր մը — և շիտակը մօտաւոր ապագայի մը մէջ —, կա՛մ Փերմանիոյ կա՛մ Անգլիոյ բարեկամութիւնը վաստկել: Փերմանիա քաջ տեղեակ է այս հիշատակ իրողութեան, ու պիտի ջանայ անկէ օգտուիլ ի նպաստ իր շահերուն:

Անգլիոյ մէջ ալ արտաքին խելացի քաղաքագիտութիւն մը այս միենոյն ճշմարտութիւնը ըմբռնելով պիտի ջանար, մինչ ասակաւին ժամանակ կար, կացութիւնը յօգուտ Անգլիոյ շահագործել: Անգլիական շահերը Փերմանականներուն հետ միենոյնը չեն: Եթէ Անգլիա իր ընթացքովը պարտաւորէ Ռուսիան ո՛ր եւ է գնով համաձայնութեան մը յանգիլ Պերլինի հետ, հետեանքը Անգլիոյ համար շատ ցաւալի պիտի ըլլայ: Եթէ Անգլիա միանալով Տետտին՝ Սլաւ ապալելու հետամտի, ինքն է որ իր ձեռքովը Փերմանիան ահեղապէս պիտի զօրացնէ: Աւ շտարակուսինք որ ինչպէս Միացեալ-Նահանգները Նոր Աշխարհին, նոյն և Փերմանիա Հին Աշխարհին մէջ առաջին պետութիւնը պիտի հանդիսանայ:

Իր ներքին գործերուն կարեւորութիւնը ինչ որ ալ ըլլայ, և խաղաղութեան պէտքը որքան որ ալ զգայ, Ռուսիոյ ներքին չէ կրաւորական դիրք պահել հանդէպ այն գործունէութեան որ կը սպանայ, եթէ դեռ յամենայ, իրմէն յափշտակել դարբրու վաստակը:

Չարերու կայօրութեան ապագան ապահովեալ չէ, ինչպէս կը թուէր ըլլալ նոյն իսկ քանի մը տարի առաջ, երբ իշխան Լօպանօֆ իր զօրութեան գագաթնակէտը հասած էր: Վաճառականութեան ու հողի գրաման համար մրցակցական մաքառումը օրէ օր աւելի մոլորեցնէ ուժգնութեամբ կը մղուի: Ուր որ կտոր մը տըրամապրիլի հող կը գտնուի անոր վրայ յարձակումը կը պատրաստուի մէկէ աւելի կողմերէ: Երբ պետութիւն մը նստի սպասէ որ իրեն յարմար սեպած ատենը, երբ բնական կարգը գայ, ելլէ գրաւէ ուզած տեղուանքը, շատ կարելի է որ այդ պետութիւնը առտու մըն ալ արթննալուն պէս տեսնէ թէ աւելի ձեռներէց զրացի մը գիշերանց ընդարձակած է իր սահմանադրութիւնները: Բեդրպուրիկ հիմակ հասկցած է որ մինչ ինք կը սպասէր որ Մօտիկ Արևելքի ծառին վրայ պտուղը հասուննար, արդէն իր ահեղ զրացին կամացուկ մը ծիւղը իրեն համար կը թօթուէր: Աւ առդին՝ Մայրագոյն Արևելքի մէջ ալ, առանց եւրոպական քոսներին բան մը ընել ներքին չէ. իսկ եւրոպական քոսներով ալ բան մը ընել հնարաւոր չէ: Ա՛լ անցած է այն ատենը ուր Ռուսիա հանդարտընթաց յառաջացումով կ'երկննար կը տարածուէր: Հիմակ հարկն անխուսափելի է որ մէկէնիմէկ

արագորէն ընդարձակ էր սահմանները, ու զանոնք ամրապէս պահպանէ ամէն ուրեք՝ ուր իր շահերը ուրիշի շահերուն կը հակառակին: Այս է իր արտաքին քաղաքականութիւնը: Այս է նաև Անգլիայինը:

ՍԵՒ ՔՐՈՆՍԻԿ

(ՏԻԱՐՊԷՒԻՐԷՆ)

Միլլի, Շամառ (Արաբ) և Փարակեչիլի թիւրտ համախառն աշխրհներու մէջ եղած դարաւոր ատելութիւնն ու նախանձը՝ հայկական կողմուսներէն ի վեր, որեքիմ թշնամութեան կերպարանք առած է: Նոր տարիէն սկսեալ մանաւանդ՝ իրարու արեան ծարաւի գազաններ դարձած՝ շարունակ իրարու վրայ կը յարձակին ու զիրար փձացնել կը նկրտին:

Վերան շէհերի Միլլի աշխրհներու պետ, համախառն իպրահիմ փաշան Սեբրեկի, Ուրֆայի, Մերախի, Տերեկի, Քիքիլի, Մէտիլէթի 200է աւելի զիւղերը թալանելէ, աւրշտկել ու արիւննել յետոյ, Տիարպէքիի շրջակայ 50ի մօտ գիւղերն ալ կողոպտեց, հարիւր հազարներով ոչխար, այծ, եղ, կով, շորի կայլն տարաւ և այսպէս հասաւ մինչև քաղաքէս կէտ ժամ հետի Ալիփոննար գեղին վրայ: Բայց չյաջողեցաւ: Եթէ այդ զիւղն ալ անարգել աւերելու յաջողէր՝ ուղղակի Տիարպէքիի վրայ պիտի գար, համոզուած ըլլալով թէ կառավարութիւն չի կայ և ինքն է միահեծան տէր և սուլթան Տիարպէքիի վիլայէթին:

Աս չէ ամէնը: Սեբրեկէն անդին, Ուրֆայի մէջ եղած Փարակեչիլի համախառն աշխրհներուն հետ և շարունակ կը կռուի: Այն կողմերը շատ զիւղեր թալանեց ու կրակի տրուաւ այս ձմեռ, ինչպէս նաև Քիքիլի աշայիլին ալ քառանց և պետերնին ու անոր եղբայրը սպաննեց, սակայն իր կողմէն ալ բաւական մարդիկ սպաննուեցան:

Իսկ Մերախի, Միտիլէթի և Տերեկի կողմերու զիւղերը անխտիր աւրած և թալան է:

Այս պատճառաւ Փարակեչիլի համախառն աշխրհները, Քիքիլի հետ միանալով՝ նամակ մը կը գրեն Շամառի (արաբ) վեց մեծ ցեղերէ բաղկացեալ աշխրհներուն թէ «Արթուն եղի՛ք, իպրահիմ փաշան մեզի վնասել յետոյ, մտադիր է յանկարծական կերպով ձեր վրայ ետ յարձակելու: Ուտի, եթէ կուզէք, մենք պատրաստ ենք ձեզի օժանդակելու, և նախադարձակ ըլլալով չորս կողմէն

պաշարենք զինքը և մեր վրէժը լուծենք...»:

Այս նամակը տանող թիւրտը ճամբան կը բռնուի. սպաննելով զինքը՝ նամակը կը տանին իպրահիմ փաշային որ կատգելով իսկոյն յարձակում կուտայ՝ անցած դարձածէն անտեղեկ Շամառի մէկ ցեղին վրայ ու անոնցմէ 19,000 ոչխար, 1,500 ուղտ, հարիւրաւոր վրան ու արջառներ կողոպտելով կը բերէ: Այս առթիւ երկու կողմէն բաւական մարդոց կորուստ կայ:

Ասոր վրայ Արաբները վեց ուղտ կը սեղունեն եւ իրենց սովորութեան համեմատ, վեց զլիւտը ցեղապետ շէյխերուն կը զրկեն: Ասոնք իսկոյն շարժման մէջ կը զննն իրենց հեծեալ ու զինեալ աշխրհները որ կ'ըսուի թէ 400,000է աւելի կան: Որովհետեւ այդ սե ուղտի առաքումը պատույ բոնաբարման սե գոյժ է: Մահացու նախատինք մըն է իրենց շատրններուն շուանները կարելի իրենց կնիկներուն ոտքի խալխալը ու բազկի պիլազուկը հանել, անպատուութիւն՝ զոր կ'արժէ արիւնով մաքրել:

Թակայն մէկ կողմէ, երբ ամբողջ Արաբները շարժումի մէջ են, միտ կողմէ իրենց վեց ցեղապետները կը հեռագրեն սուլթան Համիտին թէ՛ «Իպրահիմ փաշան մեր աւարը տանել յետոյ, մեր պատին ալ բոնաբարեց. եթէ հարկ եղած արդար փոխարինութիւնը ի գործ կը զնէք, լա՛ւ, իսկ եթէ ո՛չ մենք պատրաստ ենք մեր վրէժը անձամբ լուծելու...»:

Փալով իպրահիմ փաշային, յիշեալ հարուստ աւարը բերելէ 4-5 օր յետոյ, կը լսէ ամբողջ վեց ցեղերուն ոտքի ելած իր վրայ գալը: Իսկոյն քաղաքիս կուտակալ խալիթ պէլին հեռագրեց և զօրք ուզեց օգնութեան: Կուտակալն ալ, Գուրպան պայրամի թէպրիքէն յետոյ ամբողջ օրը հեռագրատուն անցուց եղածը սուլթանին տեղեկագրելու համար: Կայտերական հրամանի մը վրայ մարտ 24 շաբաթ օրը իր տեղ քաղաքիս Ֆէրիզ փաշան տեղապահ զնելով՝ անձամբ գնաց Վերանշէհի, Աղամաթ փաշային հետ միասին, յիշեալ երեք ցեղ համախառնները հաշտեցնելու:

Բայց կէտ ճամբան Տիրէք զիւղաքաղաքը կը մնայ վախէն, չհամարձակելով յառաջ երթալ, որովհետեւ տեղալիս հրամանատարէն զօրք ուզեց որ շտուաւ: Այս առթիւ կըսուի թէ Հալէպի Էնիս փաշան, Ուրֆայի, Սեբրեկի, Մերախի կայլն փաշաներն ալ պիտի խմբուին սոյն մարդազգանները հաշտեցնելու համար, որովհետեւ աներեակայելիօրէն գէշ պիտի ըլլայ այդ աշխրհներուն իրարու ընդհարումը որ մտաւրում է: Ու այս պատճառաւ քաղաքիս ամբողջ թիւրք ու քրիստոնեայ բնակիչները պաշարումի սարսափներուն կը սպասեն:

Երիտազգի կէտը սա է օր, խալիթ փաշան, զեռ Տօք. Շէքըրթի մօտերս իր մէկ կողմին վրայ կատարած վերաբուժական գործողութենէն շատողջացած, Տերիկ նըստած հաշտութեան յորդորներ կը կարգայ Արաբներուն

ու Իպրահիմ փաշային: Այս յորգորներուն ի պատասխան արար ցեղապետ շէյխերը, իրենց ամբողջ աւարը եւ Իպրահիմ փաշայի, իր կնոջ ու տղուն երեք զուգները կը պահանջեն: Ուստի խռովութիւնը կը շարունակուի: Ու Գարակեշեղի համիտիյէներն ալ ներկայ պատեհ առիթէն օգտուելով Սեւերեկի շուրջ Իպրահիմ փաշայի պատկանող 60 զիւղերը կը թալլեն:

Սեւերեկի Օսման փաշայի (որ այժմ Պօլիս կը գտնուի) մարդերէն Բամազան աղան, Հաճի Օսմանը եւ ուրիշ պէկեր իրար կուտեն եւ Սեւերեկէն 6-7 ժամ հեռաւորութեամբ ձամբաներու վրայ անթիւ աւազակներ՝ ձամբորդները, կարաւաններն ու փօթան կը կողոպտեն:

Իսկ Ճէգիրէի մէջ, Համիտիյէ Մուսթաֆա փաշան, Սեւերեկի Իպրահիմ փաշայէն ալ աւելի վայրագորէն կը կեղեքէ Տիգրիսի շրջակայ զիւղերը ու անխտիր թիւրք, քիւրա ու քրիստոնեայ կիներու ու կոյրերու պատիւը կը պղծէ:

Աւելորդ է ըսել որ աւազակ փաշաներով կողմէ անարգել ու աներկիւղ գործուած սճիրներու եւ կողոպուտներու հանդէպ կառավարութիւնը մեղսակից լսութիւն մը կը պահէ:

Հայը, քիւրտը, թիւրքը, ամէնքն ալ անէճք կը կարգան սուլթանին եւ անոր կառավարութեան, որ համիտիյէ աւազակներուն դէմ բողոքողները կը պատժէ, նոյնիսկ եթէ քիւրտեր ըլլան անոնք: Քանի՛ քանի՛ շէյխեր, քէհեաներ եւ Սեւերեկի Օսման փաշան Պօլիս գացին համիտիյէներու դէմ բողոքելու եւ պատժուեցան:



Հազարոյի Սեղաին փաշայի եւ իր հօրեղբորորդիներուն մէջ անդադրուած կռիւ կը մղուի արժողի առաջնութեան համար: Անցեալ ամիս Սեղաին փաշայի հօրեղբորորդիները, ինչպէ՛ս նաեւ Տուրքիսի Հաճի Բաշիտ աղան Տիարպէքիր կանչուեցան կուսակալին կողմանէ, որ գտնոնց հաշտեցնելու ապարդիւն փորձը ըրաւ: Ասոնց հակառակութեան զոհ գացին երկու երիտասարդ հայեր՝ Հազրօի մէջ: Բաց աստի, երեք հայ երիտասարդներ, Մալքէ, Ստեփան եւ Կիրակոս, որոնց հինգ ձիերը գողցած էին Պատրզանցի աւազակներ, վերոյիշեալ Բաշիտ աղայի խորհուրդին վրայ գողցուած ձիերը ետ առնել կ'երթան, եւ նոյն Բաշիտ աղայի կողմէ գարանակալ աւազակներէն կը սպաննուին լերան մը զբլուիբ:

Տիարպէքիրի կեղրոնական բանտին մէջ այժմ 650է աւելի բանտարկեալներ կան, որոնցմէ 100ը քաղաքական յանցանքի համար հայեր են եւ անկարագրելի թշուառութեան մէջ կը գտնուին:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՍՄԱՆ Կ. ՊՈՒՍԷՆ

Պոլսոյ Հայերը աշխարհիս էն երջանիկ մարդերն են. իրենց բոլոր գործերը մէկ կողմ դրած՝ ելեր Յունաց գործերովը կը զբաղին հիմա: Պօլսոյ հայ թերթերուն մէջ Հայոց Պատրիարքարանի լուրերէն աւելի Յունաց Պատրիարքարանի լուրեր կան:

Օրմանեան իր հանրածանօթ խաբեայութեամբ առիթէն կը փութայ օգտուիլ, եւ ընդունելութեան ու այցելութեան ունայն ցոյցերով ու ճաներով կ'ուզէ հայ ժողովուրդին այքին փոշի փչել եւ օտարներուն աչքը շրջանել: Տեսակ մը անպարարութիւն որ ալ նորութեան հրապոյրն ալ չունի մեզի համար:

Բայց Յունաց նորընտիր պատրիարքը, իրրեւնկարացրի ու խղճմտանքի տէր մարդ՝ այն է ինչ որ էր իր միջերևան հանդէպ իր Ազգին: Եօաքիմ Գ. որ իր առաջին պատրիարքութեան օրով գործակից եղած է մեր Ներսէս Վարժապետեանին՝ կարձէ թերեւորձ ասորոքցին ունեցող մէկը կը գտնուի իր դէմը, մինչդէռ Օթէմանեան պարզ ձեռնածու մըն է պատրիարք ըլլալէ առաջ:

Երբ մէկ կողմէն բազմաթիւ տեղական եւ պաւսաձայն խնդիրներ իրարքջ վրայ դիզուած են ու պետք ունին պատրիարքին դիմումներուն ու անվատ շանքերուն որպէս զի կարգադրուին, Օրմանեան կառավարութեան զիմեց իր եղբայրը, Տօքթօր Կոմիտաս Օրմանեանը, քաղաքապետական-առողջապահական ժողովին անդամ անդա՛նել տալու եւ յաջողեցաւ: Վաղն ան ո՛վ զիտէ իր ո՛ր ազգականին համար պատուանշամ եւ պաշտօն պիտի պահանջէ, ինչպէս իր քեռայրին, Տէր-Ներսէսեանն ցածին եղբայրն ալ այս օրերս Բաղեշի կուսակալութեան օգնական նշանակել տուաւ: Այս մէթոտիք ու շնական շահագործումին մէջ չէ անշուշտ նր պիտի լուծուած մը գտնային առկախ մնացած ազգային ստիպողական խնդիրները:

Յունաց պատրիարքը անգամ մը պաշտօնապէս սուլթանին ներկայանալէն յետոյ, երեք ֆր վերջը վերքօտին ներկայացաւ եւ առանձին երկայն տեսակցութիւն մը ունեցաւ: Երբեք Պահիճին հետ Սոգթան Համիտ ամէն խնդր կարգապիւ խոսաացաւ Եօաքիմին եւ 450 քս կի նուէր տուաւ: Այս կայսերական պաշտիշը, ինչպէս նաեւ ականակուտ օսմանիյէն Օրմանեանի խելըը զլիւն թոցուցին ու բերնին շուրբը վազցուցին, ու հիմա ինք ալ կը փորձէ զանոնք ձեռք ձգելու համար: Բայց Օրմանեան չխորհիր թէ Յունաց պատրիարքին եղած այդ

նուէրները անոր վայելած ժողովրդականութեան համար
էին մանաւանդ, վիշգրեւ կառավարութիւնը զիտէ որ,
իւր, Օրմանեան՝ Ալըզեանի մը չափ իսկ վարկ ու հա-
մակարանք չի վայելել Հայ Ազգին մէջ:

Գրած էի ասօկ առաջ որ վարչական ժողովները ի-
րենց հրաժարականները տուած են Դրան և թէ Արթին
չպիտի ուշանար մէջտեղ գալ ժողովականները համոզելու
վերին յանձնարարութեամբ ու նորէն թիւր գործին մէջ
խօսելով պիտի ջանար Երլտըզէն բան մը փրցնել: Ճիշտ
չայլպէս ալ եղաւ: Պայտէն կանչուեցաւ Արթին փա-
շան ու հրամայուեցաւ իրեն որ երթայ ու ժողովները
համոզէ, խոստանալով որ Ազգին բոլոր պէտքերը պիտի
հոգացուին: Արթին փաշան իր գերը խղճի մտօք կա-
տարեց, աւելցնելով որ—սովորական յանկերգը — եթէ
ժողովականները ցնցին, կայտը կը զայրանայ և «հի-
տեանքը ծանր կ'ըլլայ եւ աղիտարեք»: Աւելցուց միան-
գամայն որ ասկիտ խնդիրները հեռագհետէ պիտի նայ-
ուին: Այդ թուականէն ի վեր ամիս մը անցած է և ոչ
մէկ կարգադրութեան նշոյլ կայ տակաւին: Ընդհակա-
ռակը Սիտի ընտրութեան գործը շատ ձախտը վիճակի
մէջ է և Դրտը կը պահանջէ որ նոր տեղապահ մը նը-
շանակուի կիրակոս Եպիսկոպոսին տեղ, և Պատրիարքա-
րանի ներկայացուցիչ Խապանեանի տեղ ալ ոչ ոք
նշանակուի: Պատճառը այն է որ այս երկու եկեղեցա-
կանները նշխորդ կաթողիկոսական ընտրութեան փոր-
ձին ապենը, Սիտի աթոռին վրայ պետական ընտրելի
մը նօտեցնելու կառավարական ձեռնարկներուն շատա-
րեցին:

Իրաց այս վիճակին մէջ աներեւութիւն չէ՞, երբ
Օրմանեան կը յամտի կը մնայ իր պաշտօնին զուլբը:
Ամէն կողմէ կը վնասեն զինքը, նպաստները կը դադ-
րին, ալեւս ոչ ոք կը յաճախէ զինքը: Ամէն մարդ կը
նախատէ զինքը: Բայց ինչ փոյթ իրեն: Իր 50 ոսկի
ամսականը և պատրիարքական հասոյթները կը գանձէ
ու հանգիստ կ'երթայ կուզայ հաւատալով որ ներկայ
հանգամանքներուն մէջ իրեն զէմ բերան բացողները ո՛վ
զիտէ ուր կ'անեն շունչերնին:

Գաւառներէն սրտաճմրիկ լուրեր կը հասնին: Վան-
քերու եւ զիւղացիներու հնդերը կը խլուին ու կը գրաւ-
ուին: Տարքի համար տուն ու զբոյժ կը ծախուին, մար-
գեր բոնի կրօնափոխ կ'ըլլուին: Եւ Օրմանեան փոխանակ
բողոքելու կառավարութեան, ասոր անոր համար նշան
կը պահանջէ եւ պաշտօն կը խնդրէ:

Վերջին օրերս, Սամսոնի առաջնորդ ընտրել տուաւ
Մանկունին, որպէս զի ազգային շրջանակին մէջ իր
մթին գործերը խայտառակող անձն ալ զիւն տէֆ ընէ,
բայց վարչութեան անդամները, ինչպէս լրագիրները
զրեցին, հակառակեցան ասոր այն տեսակետով անշուշտ
որ աւելի լայն ասպարէզ մը պիտի բացուի Օրման-
եանին, որ հիմա ամէն բան թողած՝ ընդունելութիւն:

ներով, ճառերով և պատարագներով կը խաղցնէ Ազգը:



Ըսելի՛ք չի կայ: Օրմանեան իր լարախաղացի գերին
մէջ պէտք եղած ճարտարամտութիւնը ունի: Թէպէտեւ
շատ անգամ չկրնալով տոկայ իր ճարպոտ զանգուածին
վար կ'իյնայ. բայց բան մըն ալ եղած չունի, վասնզի
Օրմանեան, հակառակ այդ ահագին անկուսներուն—յաչս
ժողովուրդին—կատուի պէտ է, որ միշտ շորս սօքին վրայ
կ'իյնայ ու չթափուի:

Ժողովները իրենց ունայն նիստերը կը շարունա-
կեն ապարդին վերջաւորութիւններով: Ժողովական-
ները՝ արդէն ծախուած մարդիկ՝ Հայ ժողովուրդին տա-
նօպանքներուն համար բերան անգամ չեն կրնար բա-
նալ, վախնալով որ մի գուցէ իրարմէ լրտեսուին: Ա-
նոնցմէ ոչ մէկը միտք մը վրայ վստահութիւն ունի:
Առանձին, ուրիշի քով, զիրար կը բամբասեն, իսկ ժո-
ղովի ատեն բան մը բրած ըլլալու համար, Վճխօսին
իրարու խեղճ զիւնապետները ի զուր կը սպասեն թէ
իրենց Պատրիարքարանէն մինչեւ Ղալաթիա շարժած
բերած տեղեկագրութիւնները «կարգ խնդրոց» ըլլան ու
լուծման մը յանգին: Թէև գանազան գաւառներէն ելած
սրտամոլիկ նամակներ, տեղեկութիւններ կը կարգացուին,
որոնց ի լուր քարտիտներն անգամ կը ցնցուին, բայց Օր-
մանեան վարկեան մը չի կորսնցնիր իր հոպիտի ձե-
ւերը, կ'ելլայ բաներ մը կ'ըսէ. «բացի, խօսեցայ, խոս-
տուեցի եղան, գրած բազրիրներուս արդիւնքը յուսած
թէ վայելենք, եւայլն, եւայլն»:

Ո՛չ, ո՛չ երբէք, թուղթի վրայ գրուածները կը մնան
թուղթի վրայ՝ ու Հայ ժողովուրդին ցակոտագիրն ալ
նոյնն է ու նոյնը կը մնայ, որքան որ Օրմանեան սուլթա-
նին հաճոյակատար միմօր ըլլայ:

Նոր լուրեր հասան Վանէն ու Բաղէշէն որոնք կրկին
դարմաններ կը խնդրեն ժողովուրդին անապահով վի-
ճակին շաօին: Մուշի մէջ 150 հոգի բանտը լեցուցած
է նորէն կառավարութիւնը, բազմի՛ թէ յեղափոխական-
ներ են անոնք:

Մշոյ առաջնորդական տեղապահը զատապարտուեցաւ
Պօլսէն զուրս չելլելու, թէև վերջերս Տրապիզոնի առաջ-
նորդ ալ ընտրուեցաւ: Օրմանեան չկրցաւ գոնէ իր այդ
սանը փրկել սուլթանին կասկածանքէն:

Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութիւնն ալ այս
օրերս կրկին ուրիշ կերպարանք մը առաւ շնորհիւ Օր-
մանեանի որ կ'ուզէ ինքը ձեռք բերել այդ պաշտօնը:
Կառավարութիւնը այժմ կը պահանջէ որ Սիւնօր տե-
ղապահ մը ընտրուի և անկից վերջը ձեռնարկուի կաթո-
ղիկոսական ընտրութեան: Ասկից գատ չուզեք Խապայեան
և Բէքմէզեան Եպիսկոպոսներուն նախագահութիւնը, կաս-
կածելով որ անոնք կառավարութեան հակառակ մէկը
կաթողիկոս ընտրել կուտան ժողովուրդին:

Տարագիր Իզմիրեան օրագանը, անցեալները իր անտանելի վիճակը պարզող զիր մը գրած էր Օրման-եանին օրուն զեռ մինչեւ հիմա երկտող բան մը չէր գրած: Օրմանեան ժողովքի գրաւ նամակը: Տեսնենք ի՞նչ օրոշում պիտի տան ժողովականները, պիտի կրնան սուլթանին ուշադրութիւնը հրահրել Անոր վրայ, որ ախոյեանն ու Չոհր եղաւ իր ազգին արգար դատին եւ օրուն բողոքը խեղդել ուզեց սուլթանը հազարաւոր հայերու արիւնին մէջ:

ԼՈՒՐԵՐ

ՉԷԹՈՒՆ. Երբ 1896ին պետտարեանց միջամբտարեանը խաղաղութիւնը վերահաստատուեցաւ Չէրքան, համաձայնութեան պայմաններէն մէկն ալ այն էր որ յետամնաց տարրերը պիտի չպահանջուէին: Այժմ բիւրջ կտաւարութիւնը Չէրքանցիներէն կառուածական հին տարրեր պահանջելու ելեր է: Դեսպանները ինչպէս է. Պոլսէն կը հեռագրուէ, յուլիս 18 հիւնգարրի օր Դրան միօրինակ գիտողութիւններ ներկայացուցեր են ընդդէմ այս ապօրէն պահանջումին:

ՆՈՐ ԱՂԷՏՆԵՐ. Անգլիական թերթերուն կը հեռագրուէ թէ չորս հարիւր շիւրս Մալաթիոյ ԴՊժ գաւառակին Իւլպիոյ հայաբնակ գիւղին վրայ յարձակեր են յունիս 7ի գիշերը: Մինչեւ յոյս հրացան պարպեր են գեղին վրայ. ու առտուն ալ ներս մտեր եւ գեղը ամայի գտեր են: Հայերը փախեր ապաստաներ են մեկուկէ մամ հետուն գտնուող ֆէթիւտիս գեղը: Չորս երկմարդ եւ կնիկ մը սպաննուեր են ու բազմաթիւ ալ վիրասորեալներ կան: Քիտաւերը կտոր կտոր ըրած են հայ երիտասարդ մը որ ձեռքերնին ինկած էր: Ամբողջ գեղը տարի տուեր են, եկեղեցին, դպրոցը այրեր ու փլցուցեր են:

ՔԻԻՐՏԵՐԸ: ԱՆԻՇԻՄԱՆԱԿԱՆ. Երաւոր մեծ իրարանցում կը տիրէ: Սիւլիմանիայէն հասած շտաբերը հազարներ են թէ քիւրտերուն բնակարանները ոսմանակով շեցուած են: Ահարեկեալ սուրանը խաղաղութեանց խիստ հրամաններ ղրկեր է:

ԵՐԻՏԱՍՏԱՐԻ ԹԻԻՐՔԵՐԸ. Եզիպտոսի Խախը յանկարծ Պոլիս երբայուն շարժափրը գաղտնի կը մնար. այժմ կ'իմացուի թէ Ապպաս փաշա հետք տարեր էր Եզիպտոս ապաստանած Երիտասարդ Թիւրքեր որունց վերադարձին համար ինք պիտի միջամտեր, սակայն աւազարկուած պայմանները չընդունուելով, ներումի ալ կընկալուաները ձաւթն եւ զարձեր են: Խախը ալ շատ

գեղ ընդունելութիւն գտած է, եւ կըսուի թէ զգուած մեկներ է ու յայտարարեր է որ մէյ մը ալ Պոլիս ուր պիտի չկոխէ:

ԴՐԱՍՄԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ. Կ. Պոլիս յանձնաժողով մը կազմուած էր Ելմտական բարեկարգութեան միջոցները խորհելու նպատակաւ: Այդ մարմինը յայտարարած է թէ առանց հիկ միջոցն ոսկիի փոխառութեան հնարատոր պիտի չըլլայ ու է բարեկարգութեան, ու Թիւրքիա պիտի չկարենայ իր յանձնատարութիւնները կատարել: Այս առաջարկին համար սուրանը նախարարներուն խորհուրդ հարցուցած ըլլալով, պատասխան ըստացեր է թէ արդի հանգամանքներուն մէջ անհնարին է փոխարինութեան մը հնարատարութիւնը մտքէ անցնել:

ԱԼՊԱՆԻԱԾԻ ՅԵՂԱՓՈԹԱԿԱՆՆԵՐԸ. Վիեննայէն կը հեռագրեն թէ անցեալ ցանի մը օրերու մէջ արիւնակող ընդհարումներ տեղի ունեցած են Ալպանական Յեղափոխական Բոմբիւրի կողմէ բիւրջական սանձաւազուիսը զրկուած խուճերու ու բիւրջ կանոնատոր զօրքերու միջեւ: Երկու կողմէն ալ շատեր սպաննուած է վիրասորուած են: Կըսուի թէ Ալպանիացիները իրենց գերիներու գլուխը ցողերու գլուխը անցուցած յազարական բախորներով պատգուցած են ալպանական քաղաքներու մէջ: Թիւրքերը՝ միւս կողմէն բարբառութեամբ իրենց գերիները շարքած են:

Ալպանական Բոմբիւրի որոշած է իր կեդրոնավայրը Մօրեքնէկոյի Չէրինէ քաղաքը փոխադրել: Բուրս ալպանական Բոմբիւրիները իրենց ներկայացուցիչները զըրկելով պատգուաւորական ժողով մը պիտի կազմեն որ պիտի որոշեն իրենց ապագայի գործունէութիւնը:

ՆՈՐ ՀԱՍՅԷ

«ՆՈՐ ԿԵՄՆԻՔ»-ի վերաբերեալ նամակ ու բաժնեգիրն ղրկել հետեւեալ հասցէին.

REDACTION DU "NOR-GUIANK,"
27, BATHURST GARDENS,
KENSAL RISE,
(ENGLAND.) LONDON, N. W.

ՆՈՐ ԿԵՄՆԻՔ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15ին: Բաժնեգիրն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 ալբար: